

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2025 թվականի հունիսի 27-ին քաղաք Մինսկում ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՄՈՆԴՈԼԻԱՅԻ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ

Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ) եւ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ ԵԱՏՄ անդամ պետություններ)՝ մի կողմից, եւ Մոնղոլիան՝ մյուս կողմից,

ՁԳՏԵԼՈՎ զարգացնել եւ խորացնել ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Մոնղոլիայի միջեւ փոխադարձ առեւտուրը եւ տնտեսական համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում,

ՀԱՍՏԱՏԵԼՈՎ առեւտրային եւ տնտեսական հարաբերությունների համար հիմք հանդիսացող շուկայական տնտեսության սկզբունքներին իրենց հետեւողականությունը, ինչպես նաեւ ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Մոնղոլիայի միջեւ փոխշահավետ առեւտրային եւ տնտեսական հարաբերություններին ակտիվորեն մասնակցելու եւ դրանց ընդլայնումը խրախուսելու իրենց մտադրությունը,

ՍՏԵՂԾԵԼՈՎ անհրաժեշտ պայմաններ ԵԱՏՄ իրավունքին, ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Մոնղոլիայի օրենքներին եւ կարգավորումներին, ինչպես նաեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կանոններին համապատասխան ապրանքների եւ կապիտալի ազատ տեղաշարժի համար,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ հետեւյալի մասին.

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ

1. Սույն համաձայնագրի կողմերն են մի կողմից՝ ԵԱՏՄ անդամ պետությունները եւ ԵԱՏՄ-ն, որոնք «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրից (այսուհետ՝ ԵԱՏՄ-ի մասին պայմանագիր) ծագող իրենց իրավասության համապատասխան ոլորտների շրջանակներում գործում են համատեղ կամ առանձին, եւ մյուս կողմից՝ Մոնղոլիան (այսուհետ՝ Կողմեր):

2. Կողմերը սույն համաձայնագրի դրույթներին եւ ԱՀԿ կանոններին, ներառյալ՝ մասնավորապես 1994 թվականի Սակագների եւ առետրի գլխավոր համաձայնագրի (այսուհետ՝ ՍԱԳՀ (1994 թվական)) XXIV հոդվածին համապատասխան ազատականացնում են փոխադարձ առետուրը՝ նպատակ ունենալով մի կողմից՝ ԵԱՏՄ եւ ԵԱՏՄ անդամ պետությունների եւ մյուս կողմից՝ Մոնղոլիայի միջեւ ազատ առետրի ռեժիմ սահմանել:

Հոդված 2

Նպատակները

Սույն համաձայնագրի նպատակները, որոնք ավելի հստակ շարադրված են սկզբունքների եւ կանոնների հիման վրա, հետեւյալն են.

ա) ազատականացնել եւ դյուրացնել Կողմերի միջեւ ապրանքների առետուրը, մասնավորապես՝ սակագնային եւ ոչ սակագնային խոչընդոտները նվազեցնելու կամ վերացնելու միջոցով՝ սույն համաձայնագրի դրույթներին համապատասխան.

բ) աջակցել Կողմերի միջեւ տնտեսական եւ առետրային համագործակցությանը.

գ) խրախուսել Կողմերի միջեւ առետրի ընդլայնումը եւ բազմազանեցումը:

Հոդված 3

Կապը այլ միջազգային համաձայնագրերի հետ

1. Սույն համաձայնագրի եւ «Առետրի համաշխարհային կազմակերպության

ստեղծման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաքեշի համաձայնագրի (այսուհետ՝ ԱՀԿ համաձայնագիր) դրույթների միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում հակասության սահմաններում գերակայում է ԱՀԿ համաձայնագրի դրույթը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հակասության դեպքում Կողմերն անմիջապես խորհրդակցում են փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու նպատակով:

Հոդված 4

Ապրանքների դասակարգումը

1. Կողմերի միջև առևտրի շրջանակում ապրանքների դասակարգումը կարգավորվում է յուրաքանչյուր կողմի համապատասխան սակագնային անվանացանկով՝ «Ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի մասին» 1983 թվականի հունիսի 14-ի միջազգային կոնվենցիայի համաձայն ստեղծված՝ ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգին (այսուհետ՝ Ներդաշնակեցված համակարգ կամ ՆՀ) համապատասխան:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր սակագնային անվանացանկում արվող ցանկացած փոփոխություն կատարվի առանց խախտելու սույն համաձայնագրի 1-ին հավելվածին (Եվրասիական տնտեսական միության սակագնային պարտավորությունների ժամանակացույց) եւ 2-րդ հավելվածին (Մոնղոլիայի սակագնային պարտավորությունների ժամանակացույց) համապատասխան սահմանված սակագնային զիջումները: ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեությանն առնչվող ապրանքների անվանացանկի եւ Ապրանքների նույնականացման եւ ծածկագրման Մոնղոլիայի ներդաշնակեցված համակարգի այդ փոփոխությունը պետք է կատարվի համապատասխանաբար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Մոնղոլիայի կողմից:

Հոդված 5

Մաքսատուրքերի նվազեցումը եւ (կամ) վերացումը

1. Յուրաքանչյուր Կողմ Կողմերից մեկի տարածքի ծագում ունեցող ապրանքների համար ապահովում է սույն համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հավելվածներով նախատեսված առաջին Կողմի՝ սակագնային պարտավորությունների ժամանակացույցով սահմանված ռեժիմից ոչ պակաս բարենպաստ ռեժիմ:

2. Սույն հոդվածով որեւէ Կողմի չի արգելվում ցանկացած ապրանքի ներմուծման առնչությամբ ցանկացած պահի սահմանել՝

ա) համանման ներքին արտադրանքի նկատմամբ սույն համաձայնագրի 9-րդ հոդվածի (*Ազգային ռեժիմ*) դրույթներին համապատասխան մշտապես կիրառվող ներքին հարկերին համարժեք վճար,

բ) Կողմի օրենքներին եւ կարգավորումներին համապատասխան սույն համաձայնագրի 19-րդ հոդվածի (*Առեւտրային պաշտպանության միջոցները*) համաձայն կիրառվող ցանկացած տուրք,

գ) սույն համաձայնագրի 7-րդ հոդվածին (*Վճարներն ու վճարումները*) համապատասխան կիրառվող ծառայությունների արժեքին համարժեք վճարներ կամ այլ վճարումներ:

3. Եթե Կողմի տարածքի ծագում ունեցող ապրանքի համար սույն համաձայնագրի 1-ին եւ 2-րդ հավելվածների համաձայն կիրառվող արտոնյալ մաքսատուրքի դրույքաչափն ավելի բարձր է, քան ազգերի առավել բարենպաստության ռեժիմով նույն ապրանքի համար կիրառվող մաքսատուրքի դրույքաչափը, ապա այդպիսի ապրանքի համար կիրառվում է ազգերի առավել բարենպաստության ռեժիմով սահմանված դրույքաչափը:

4. Արտահանման տուրքերի կիրառումը կարգավորվում է Կողմերի համապատասխան օրենքների եւ կարգավորումներին, ինչպես նաեւ ԱՀԿ համաձայնագրով սահմանված իրենց համապատասխան պարտավորությունների համաձայն:

Հոդված 6

Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը

ՍԱԳՀ 1994-ի I հոդվածը եւ դրա բացատրական ծանոթագրությունները, ինչպես նաեւ ԱՀԿ համաձայնագրին համապատասխան կիրառվող՝ ՍԱԳՀ 1994-ի I հոդվածով սահմանված ռեժիմ տրամադրելու պարտավորությունից ցանկացած բացառություն, ազատում եւ հրաժարում ինկորպորացված են սույն համաձայնագրում եւ դրա անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 7

Վճարները եւ վճարումները

Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապահովի, որ ապրանքների ներմուծման կամ արտահանման նկատմամբ կամ դրանց կապակցությամբ կիրառվող բոլոր վճարները եւ գանձումները համապատասխանեն ՍԱԳՀ 1994-ի VIII հոդվածին: Այս նպատակով ՍԱԳՀ 1994-ի VIII հոդվածը, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրությունները եւ լրացուցիչ դրույթներն ինկորպորացված են սույն համաձայնագրում եւ դրա անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 8

Համարժեք ազդեցություն ունեցող արգելքները, քանակական սահմանափակումները եւ միջոցները

Եթե սույն համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, Կողմերը, ՍԱԳՀ 1994-ի XI հոդվածին եւ ՍԱԳՀ 1994-ի XIII հոդվածին համապատասխան, փոխադարձ առեւտրի մասով կարող են կիրառել ապրանքների ներմուծումների եւ արտահանումների վրա համարժեք ազդեցություն ունեցող արգելքներ, քանակական սահմանափակումներ կամ այլ միջոցներ:

Հոդված 9

Ազգային ռեժիմ

Կողմերից յուրաքանչյուրն ազգային ռեժիմ է տրամադրում մյուս Կողմի ապրանքների մասով՝ ՍԱԳՀ 1994-ի III հոդվածին համապատասխան: Այս նպատակով ՍԱԳՀ-ի 1994-ի III հոդվածը, այդ թվում՝ դրա բացատրական ծանոթագրությունները

ինկորպորացված են սույն համաձայնագրում եւ դրա անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 10

Առեւտրի տեխնիկական խոչընդոտները

1. Կողմերը պետք է կիրառեն իրենց համապատասխան օրենքներն ու կարգավորումները տեխնիկական կարգավորման ոլորտում՝ ԱՀԿ «Առեւտրի տեխնիկական խոչընդոտների վերաբերյալ» համաձայնագրի 1Ա հավելվածի դրույթներին համապատասխան:

2. Սույն համաձայնագրի դրույթները կատարելու նպատակով Կողմերը խրախուսում են ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգման, չափագիտության, շուկայի վերահսկողության եւ համապատասխանության գնահատման ընթացակարգերի, այդ թվում՝ հավատարմագրման, թեստավորման եւ սերտիֆիկացման համար պատասխանատու իրենց համապատասխան մարմինների միջեւ երկկողմ համագործակցությունը:

3. Առեւտրի իրականացումը դյուրացնելու նպատակով Կողմերը կարող են բանակցություններ սկսել փոխադարձ առեւտրի տեխնիկական խոչընդոտների վերացման, այդ թվում՝ հատուկ ապրանքի կամ ապրանքների խմբերի նկատմամբ համապատասխանության գնահատման ընթացակարգերի արդյունքների փոխադարձ ճանաչման համաձայնագրեր ստորագրելու նպատակով:

4. Պարտադիր պահանջներին ապրանքի համապատասխանության գնահատման պահանջները եւ մեթոդները սահմանվում են Կողմերի պատասխանատու մարմինների կողմից՝ ներմուծող Կողմի կիրառելի օրենքներին եւ կարգավորումներին եւ «Առեւտրի տեխնիկական խոչընդոտների մասին» համաձայնագրի դրույթներին համապատասխան, որոնք նշված են ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածում:

5. Եթե որեւէ Կողմ մուտքի նավահանգստում արգելապահում է մյուս Կողմի տարածքից արտահանված ապրանքներն այն պատճառով, որ բացակայում են այդ Կողմի տեխնիկական կանոնակարգին (կանոնակարգերին) կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերին այդ ապրանքների համապատասխանությունը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը, կամ

ենթադրվում է, որ այդ ապրանքները չեն համապատասխանում այդ Կողմի տեխնիկական կանոնակարգին (կանոնակարգերին) կամ համապատասխանության գնահատման ընթացակարգերին, ապա արգելապահման պատճառների մասին անհապաղ տեղեկացվում է ներմուծողին կամ ներմուծողի (փոխադրողի) ներկայացուցչին:

6. Այն դեպքում, երբ Կողմերից մեկը գտնում է, որ մյուս Կողմը ձեռնարկել է որեւէ միջոց, որն առետրի համար ամենայն հավանականությամբ կստեղծի կամ ստեղծել է անհարկի խոչընդոտ, Կողմերը փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու նպատակով համաձայնում են անցկացնել տեխնիկական խորհրդակցություններ Համատեղ կոմիտեի շրջանակներում: Տեխնիկական խորհրդակցությունները կարող են անցկացվել Կողմերի կողմից փոխադարձաբար համաձայնեցված ցանկացած եղանակով:

Հոդված 11

Սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումները

1. Կողմերը սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտում պետք է կիրառեն իրենց համապատասխան օրենքներն ու կարգավորումները՝ «Սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների կիրառման մասին» համաձայնագրին համապատասխան, որոնք նշված են ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածում:

2. Կողմերը կարող են ձեռք բերել սանիտարական եւ բուսասանիտարական միջոցների մշակման, ընդունման եւ (կամ) կիրառման գործընթացը վարելուն ուղղված լրացուցիչ պայմանավորվածություններ՝ Կողմերի միջեւ առետրի վրա դրանց բացասական ազդեցությունները նվազագույնին հասցնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի գրավոր հարցմամբ պետք է ժամանակին տեղեկություններ տրամադրի սանիտարական եւ բուսասանիտարական միջոցներին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ, որն առաջացել է կամ կարող է առաջանալ Կողմերի միջեւ երկկողմ առետրի արդյունքում:

4. Այն դեպքում, երբ Կողմերից մեկը գտնում է, որ մյուս Կողմը ձեռնարկել է որեւէ

միջոց, որն առետրի համար ամենայն հավանականությամբ կստեղծի կամ ստեղծել է քողարկված սահմանափակում, Կողմերը փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու նպատակով համաձայնում են անցկացնել տեխնիկական խորհրդակցություններ Համատեղ կոմիտեի շրջանակներում: Տեխնիկական խորհրդակցությունները կարող են անցկացվել Կողմերի կողմից համաձայնեցված ցանկացած եղանակով:

Հոդված 12

Ապրանքների ծագումը

Ապրանքների ծագումը որոշվում է ծագման կանոնների հիման վրա, որոնք սահմանված են սույն համաձայնագրի՝ «Ծագման կանոններ» 3-րդ հավելվածում:

Հոդված 13

Մաքսային վարչարարությունը եւ առետրի դյուրացումը

1. Սույն հոդվածը կիրառվում է Կողմերի միջեւ առետրում ընդգրկված ապրանքների բացթողման համար անհրաժեշտ մաքսային վարչարարության միջոցների եւ մաքսային գործառնությունների իրականացման նկատմամբ՝ խթանելու համար՝

ա) մաքսային ընթացակարգերի եւ մաքսային ձեւակերպումների թափանցիկությունը,

բ) առետրի դյուրացումը, եւ

գ) մաքսային համագործակցությունը, ներառյալ՝ Կողմերի մաքսային մարմինների միջեւ տեղեկությունների փոխանակումը:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է իր մաքսային մարմինների կողմից կիրառվող մաքսային վարչարարության միջոցների կանխատեսելիությունը, հետետողականությունը եւ թափանցիկությունը:

3. Կողմերի մաքսային ընթացակարգերը հնարավորության դեպքում եւ այդ

Կողմերի մաքսային օրենքներով եւ կարգավորումներով սահմանված դեպքերում պետք է հիմնված լինեն Համաշխարհային մաքսային կազմակերպության ստանդարտների ու առաջարկվող գործելակերպերի վրա:

4. Յուրաքանչյուր Կողմի մաքսային մարմինները պետք է ձգտեն վերանայել իրենց մաքսային վարչարարության միջոցները՝ առեւտրի դյուրացման նպատակով այդ միջոցները պարզեցնելու համար:

5. Կողմերը հնարավորության սահմաններում պետք է հրապարակեն ընդհանուր կիրառության մաքսային օրենքները եւ կարգավորումներն անգլերենով:

6. Յուրաքանչյուր Կողմ սահմանում է կամ շարունակում է կիրառել ապրանքների արդյունավետ բացթողմանն ուղղված մաքսային ընթացակարգեր ու գործառնություններ՝ Կողմերի միջեւ առեւտուրը դյուրացնելու նպատակով: Դա Կողմին չի պարտավորեցնում բաց թողնել ապրանքները, եթե տվյալ ապրանքների բացթողման հետ կապված այդ Կողմի պահանջները չեն բավարարվել:

7. Սույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ պետք է՝

ա) նախատեսի ապրանքների բացթողումը մաքսային հայտարարագիրը գրանցվելուց հետո ոչ ավելի, քան 48 ժամվա ընթացքում՝ բացառությամբ Կողմերի մաքսային օրենքներով եւ կարգավորումներով նախատեսված հանգամանքների, եւ

բ) ընդունի կամ կիրառի մինչեւ ապրանքների ժամանումը մաքսային տեղեկատվության էլեկտրոնային ներկայացման եւ մշակման ապահովումը՝ ժամանումից հետո ապրանքների բացթողումն արագացնելու նպատակով:

գ) կիրառի ռիսկերի կառավարման համակարգ՝ ռիսկերի կանոնավոր գնահատման միջոցով՝ ջանքերը կենտրոնացնելով բարձր ռիսկայնության ապրանքների զննումների վրա եւ պարզեցնելով ցածր ռիսկայնության ապրանքների հետ իրականացվող մաքսային գործառնությունների կիրառումը:

8. Յուրաքանչյուր Կողմ պետք է վարի առեւտրի դյուրացման գործընկերության ծրագիր այն օպերատորների համար, որոնք համապատասխանում են անվտանգության հատուկ չափանիշներին, այսուհետ՝ Լիազորված տնտեսական օպերատորների (LSO) ծրագրեր՝ համաձայն Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ Համաշխարհային առեւտրի ապահովմանն ու դյուրացմանն

ուղղված SAFE ստանդարտների շրջանակի:

9. Կողմերը պետք է ձգտեն համագործակցել՝

ա) իրենց համապատասխան LSO ծրագրերի գործարկման եւ բարելավումների վերաբերյալ փորձի փոխանակմամբ՝ ձգտելով անհրաժեշտության դեպքում ընդունել լավագույն գործելակերպեր.

բ) յուրաքանչյուր ծրագրով լիազորված սուբյեկտների վերաբերյալ միմյանց հետ տեղեկատվության փոխանակմամբ՝ յուրաքանչյուր Կողմի օրենսդրությանը եւ սահմանված գործընթացներին համապատասխան, եւ

գ) համագործակցելով մյուս Կողմերի կողմից լիազորված սուբյեկտների համար առևտրի դյուրացման արտոնությունների բացահայտման եւ իրականացման հարցում:

Հոդված 14

Մաքսային համագործակցությունը

1. Սույն համաձայնագրի արդյունավետ կիրարկումը դյուրացնելու նպատակով Կողմերի մաքսային մարմինները խթանում են միմյանց հետ համագործակցությունը՝ Կողմերի միջեւ առևտրում ընդգրկված ապրանքների վրա ազդող առանցքային մաքսային հարցերի շուրջ:

2. Եթե որեւէ Կողմի մաքսային մարմինն այդ Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն անօրինական գործունեության վերաբերյալ ողջամիտ կասկածներ ունի, ապա այդ մաքսային մարմինը կարող է դիմել մյուս Կողմի մաքսային մարմին՝ ապրանքների արտահանման եւ (կամ) ներմուծման վերաբերյալ սովորաբար հավաքվող հատուկ գաղտնի տեղեկություններ տրամադրելու պահանջով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան Կողմի ներկայացրած հարցումը պետք է լինի գրավոր, դրա մեջ պետք է նշվի տվյալ տեղեկությունների հարցման նպատակը, եւ դրան պետք է կցվեն տվյալ ապրանքները նույնականացնելու համար բավարար տեղեկություններ: Հարցումները պետք է փոխանցվեն էլեկտրոնային

եղանակով՝ սույն հոդվածի 6-րդ կետում նշված կապուղիներով: Հարցման թղթային տարբերակը նույնպես պետք է ուղարկվի փոստով: Սույն հոդվածի շրջանակներում բոլոր հարցումները եւ հարցումների պատասխանները պետք է ներկայացվեն անգլերենով:

4. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան Կողմի՝ հարցումն ստացող մաքսային մարմինը, այդ Կողմի համապատասխան օրենքներին եւ կարգավորումներին համապատասխան, պահանջվող տեղեկությունները ներառող գրավոր պատասխանը պետք է տրամադրի այդ հարցումն ստանալու օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում: Եթե ամբողջական կամ մասնակի պատասխան հնարավոր չէ տրամադրել սահմանված ժամկետի ընթացքում, ապա հարցումն ստացող մաքսային մարմինը հարցումը ներկայացնող մաքսային մարմնին պետք է տեղեկացնի այդ տեղեկությունները տրամադրելու ակնկալվող ժամկետի մասին:

5. Սույն հոդվածի 2-4-րդ կետերին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները Կողմերը պետք է համարեն գաղտնի: Այդ տեղեկությունները չպետք է բացահայտվեն առանց այդ տեղեկությունները տրամադրող անձի կամ Կողմի մարմնի թույլտվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք բացահայտելը կարող է անհրաժեշտ լինել դատական գործընթացների նպատակներից ելնելով:

6. Կողմերի մաքսային մարմինները պետք է ձգտեն ստեղծել եւ կիրառել մաքսային համագործակցության համար կապուղիներ, այդ թվում՝ ստեղծել կապի ապահովման կենտրոններ, որոնք կոյուրացնեն տեղեկությունների արագ ու անվտանգ փոխանակումը եւ կբարելավեն մաքսային հարցերի համակարգումը:

7. Մաքսային վարչարարության եւ առետրի դյուրացման վերաբերյալ համապատասխան հարցերը քննարկելու նպատակով տեխնիկական հանդիպումներն անցկացվում են Կողմերի կողմից համաձայնեցված ժամանակ եւ վայրում:

8. Մաքսային ընթացակարգերի իրականացումը դյուրացնելու եւ մաքսային օրենքների եւ կարգավորումների խախտումները կանխելու նպատակով Կողմերը կարող են կազմակերպել եւ պարբերաբար կիրառել Կողմերի միջեւ առետրում ընդգրկված ապրանքների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում Կողմերի մաքսային մարմինների միջեւ (այսուհետ՝ տեղեկությունների էլեկտրոնային

փոխանակում):

9. Տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի գործառությանը ներկայացվող բոլոր պահանջները եւ տեխնիկական պայմանները, ինչպես նաեւ փոխանակվող տեղեկությունների կոնկրետ բովանդակությունը սահմանվում են ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Մոնղոլիայի լիազորված մարմինների միջեւ առանձին արձանագրությամբ:

10. Կողմերը պետք է տեղեկությունների էլեկտրոնային փոխանակումը ներդնեն՝ հիմնվելով ԵԱՏՄ-ի ինտեգրված տեղեկատվական համակարգի տեխնիկական ենթակառուցվածքի եւ Մոնղոլիայի համապատասխան ենթակառուցվածքի օգտագործման վրա:

11. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ԵԱՏՄ-ի անունից համակարգում է տեղեկությունների էլեկտրոնային փոխանակման համակարգի ստեղծումը եւ նպաստում դրա աշխատանքին:

Հոդված 15

Տարանցիկ փոխադրման ազատությունը

ՍԱԳՀ 1994-ի V հոդվածն ու ԱՀԿ-ի «Առետրի դյուրացման մասին» համաձայնագրի XI հոդվածն ինկորպորացված են սույն համաձայնագրում եւ դրա անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 16

Ընդհանուր բացառությունները

1. Պայմանով, որ նշված միջոցները չեն կիրառվի այնպես, որ Կողմերի միջեւ, որտեղ գերակշռում են միեւնույն պայմանները, կամայական կամ չարդարացված խտրականության միջոցներ կամ միջազգային առետրի քողարկված սահմանափակումներ առաջացնեն, սույն համաձայնագրում ոչինչ չի կարող

մեկնաբանվել որպես խոչընդոտ՝ որեւէ Կողմի համար ընդունելու կամ իրականացնելու այնպիսի միջոցներ, որոնք՝

ա) անհրաժեշտ են հանրային բարքերը պաշտպանելու համար.

բ) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքը կամ առողջությունը պաշտպանելու համար.

գ) առնչվում են ոսկու կամ արծաթի ներմուծմանը կամ արտահանմանը.

դ) անհրաժեշտ են այն օրենքների կամ կարգավորումների հետ համապատասխանությունն ապահովելու համար, որոնք չեն հակասում ՍԱԳՀ 1994-ի դրույթներին, այդ թվում՝ այնպիսիք, որոնք վերաբերում են մաքսային օրենսդրության պահպանման գործողություններին, ՍԱԳՀ 1994-ի II հոդվածի 4-րդ կետին եւ XVII հոդվածին համապատասխան գործող մենաշնորհներին, ինչպես նաեւ արտոնագրերի, ապրանքային նշանների եւ հեղինակային իրավունքների պաշտպանությանը եւ մոլորության մեջ գցող գործելակերպերի կանխարգելմանը.

ե) վերաբերում են բանտարկյալների աշխատանքի արդյունքում ստեղծված ապրանքներին.

զ) կիրառվում են գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ներկայացնող ազգային հարստությունների պաշտպանության համար.

է) առնչվում են սպառվող բնական ռեսուրսների պահպանությանը, եթե այդ միջոցառումներն իրականացվում են ներքին արտադրության կամ սպառման մասով առկա սահմանափակումների հետ համատեղ.

ը) ձեռնարկվում են՝ ելնելով այն պարտավորություններից, որոնք սահմանված են որեւէ միջկառավարական ապրանքային համաձայնագրով, որը համապատասխանում է ԱՀԿ-ին ներկայացված չափանիշներին եւ չի մերժվում դրա կողմից, կամ որոնք ինքնին որպես այդպիսին ներկայացվում են եւ չեն մերժվում.

թ) ներառում են սահմանափակումներ ներքին արտադրության նյութերի արտահանումների նկատմամբ, ինչն անհրաժեշտ է որպես պետական կայունացման ծրագրի մաս՝ ապահովելու համար այդպիսի նյութերի զգալի քանակությունը ներքին մշակման ոլորտի համար այն ժամանակահատվածում, երբ այդ նյութերի ներքին գինն

աշխարհում տվյալ պահին առկա գնից ցածր է՝ պայմանով, որ նման սահմանափակումները չեն գործի ներքին արդյունաբերության արտահանումներն ավելացնելու, ինչպես նաև ներքին արդյունաբերության պահպանման նպատակով եւ չեն շեղվի ՍԱԳՀ 1994-ի ոչ խտրական վերաբերմունքի վերաբերյալ դրույթներից.

ժ) կարելի է նշանակություն ունեն այն ապրանքների ձեռքբերման կամ բաշխման համար, որոնք դեֆիցիտ են ընդհանրապես կամ կոնկրետ տեղական մակարդակով՝ պայմանով, որ ցանկացած այդպիսի միջոց համապատասխանի այն սկզբունքին, որ Կողմերն ունեն այդ ապրանքների միջազգային առաքումներից հավասար մասնաբաժին ստանալու իրավունք, եւ որ սույն համաձայնագրի մյուս դրույթներին չհամապատասխանող ցանկացած այդպիսի միջոց դադարեցվում է, երբ դրա առաջացման համար հիմք հանդիսացող պայմանները դադարում են գոյություն ունենալ:

2. Կողմերը հնարավորության չափով տեղեկացնում են միմյանց սույն հոդվածով ձեռնարկված միջոցների եւ դրանց դադարեցման մասին:

Հոդված 17

Անվտանգությանն առնչվող բացառությունները

Սույն համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ՝

ա) որեւէ Կողմից պահանջի այնպիսի տեղեկություններ, որոնց բացահայտումը հակասում է այդ Կողմի անվտանգության էական շահերին, կամ

բ) խոչընդոտի որեւէ Կողմի՝ ձեռնարկելու որեւէ գործողություն, որն այդ Կողմն անհրաժեշտ է համարում իր անվտանգության էական շահերի պաշտպանության համար՝

ի) տրոհվող նյութերի կամ այն նյութերի մասով, որոնցից դրանք պատրաստվում են,

ii) զենքի, զինամթերքի եւ ռազմական նշանակության արտադրանքի առևտրի եւ այլ ապրանքների եւ նյութերի այնպիսի առևտրի կապակցությամբ, որն

ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացվում է գինված ուժերին մատակարարելու համար,

iii) միջազգային հարաբերություններում պատերազմի կամ այլ արտակարգ իրավիճակի ժամանակ, կամ

գ) խոչընդոտի որեւէ Կողմի՝ միջազգային խաղաղություն ու անվտանգություն պահպանելու նպատակներով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունների համաձայն որեւէ գործողություն ձեռնարկելը:

Հոդված 18

Վճարային հաշվեկշռի ապահովման նպատակներով

կիրառվող սահմանափակումները

1. Որեւէ Կողմի մոտ վճարային հաշվեկշռի հետ կապված եւ արտաքին ֆինանսական լուրջ դժվարություններ ի հայտ գալու կամ դրանց առաջացման վտանգի դեպքում այն կարող է ՍԱԳՀ 1994-ի XII հոդվածին եւ ՍԱԳՀ 1994-ի Վճարային հաշվեկշռի դրույթների մասին փոխհամաձայնությանը համապատասխան ձեռնարկել ներկրումը սահմանափակող միջոցներ: Այդպիսի սահմանափակող միջոցները պետք է համապատասխանեն Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին:

2. Համապատասխան Կողմը մյուս Կողմին անմիջապես տեղեկացնում է վճարային հաշվեկշռի ապահովման նպատակով նման միջոցներ ձեռնարկելու իր մտադրության, ինչպես նաեւ դրանց իրականացման ու չեղարկման ժամանակացույցի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված սահմանափակող միջոցների ընդունման կամ պահպանման դեպքում Համատեղ կոմիտեի շրջանակներում շահագրգիռ Կողմի կողմից անմիջապես խորհրդակցություններ են անցկացվում՝ դրա կողմից ընդունված սահմանափակումները քննարկելու նպատակով: Այդ խորհրդակցությունների ընթացքում գնահատվում են համապատասխան Կողմի վճարային հաշվեկշռի վիճակը եւ սույն հոդվածին համապատասխան ընդունված կամ պահպանվող սահմանափակող

միջոցները՝ ի թիվս այլնի հաշվի առնելով հետեւյալ գործոնները.

ա) վճարային հաշվեկշռի հետ կապված դժվարությունների բնույթը եւ աստիճանը,

բ) մյուս Կողմի տնտեսության վրա սահմանափակումների հնարավոր ազդեցությունը, եւ

գ) այլընտրանքային ուղղիչ միջոցները, որոնք կարող են հասանելի լինել:

Խորհրդակցությունների ընթացքում պետք է անդրադարձ կատարվի ցանկացած սահմանափակող միջոցի համապատասխանությանը ՍԱԳՀ 1994-ի XII հոդվածին:

Հոդված 19

Առետրի պաշտպանական միջոցները

1. Կողմերը կիրառում են համընդհանուր պաշտպանական, հակազնազցման եւ փոխհատուցման միջոցներ՝ ՍԱԳՀ 1994-ի XIX հոդվածի, ՍԱԳՀ 1994-ի VI հոդվածի դրույթներին, Երաշխիքների մասին համաձայնագրին, ՍԱԳՀ 1994-ի VI հոդվածի իրականացման մասին համաձայնագրին, ԱՀԿ համաձայնագրի 1Ա հավելվածի «Սուբսիդիաների եւ փոխհատուցման միջոցների մասին» համաձայնագրին համապատասխան:

2. Հակազնազցման, փոխհատուցման տուրքի եւ համընդհանուր պաշտպանական միջոցների առնչությամբ քննություններ եւ պատժամիջոցների շրջանցումը կանխող գործողություններ ներառող հետագա վարույթներ եւ այլ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակներով Մոնդոլիան ԵԱՏՄ անդամ պետություններին դիտարկում է առանձին վերցրած, այլ ոչ թե ԵԱՏՄ-ն որպես մեկ ամբողջություն, եւ ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ-ից իրականացվող ներմուծումների նկատմամբ չի կիրառում հակազնազցման, փոխհատուցման եւ համընդհանուր պաշտպանական միջոցներ, այդ թվում՝ պատժամիջոցների շրջանցումը կանխող միջոցներ:

3. Հակազնազցման կամ փոխհատուցման հետաքննություն սկսելու

հնարավորությունը դիտարկող Կողմը պետք է մյուս Կողմին գրավոր ծանուցի քննություն սկսելու դիմում ստանալու մասին ոչ ուշ, քան քննությունն սկսելու օրվանից 15 (տասնհինգ) օր առաջ:

4. Համընդհանուր պաշտպանական միջոց կիրառելու մտադրություն ունեցող Կողմը մյուս Կողմին անմիջապես տրամադրում է հետաքննության սկզբի, ինչպես նաև նախնական եւ վերջնական եզրահանգումների վերաբերյալ համապատասխան տեղեկությունների մասին գրավոր ծանուցում:

5. Կողմերը կարող են խորհրդակցել հակագնագցման, փոխհատուցման եւ ընդհանուր պաշտպանական միջոցների կիրառման հետ կապված հարցերի շուրջ՝ Կողմերից որեւէ մեկի գրավոր պահանջով: Խորհրդակցությունները պետք է տեղի ունենան հնարավորինս շուտ՝ այդ մասին գրավոր պահանջն ստանալուց հետո ոչ ուշ, քան 30 (երեսուն) օր հետո: Այդպիսի խորհրդակցությունները չպետք է կանխեն, որ Կողմերը սկսեն հակագնագցման, փոխհատուցման պարտավորության կամ համընդհանուր պաշտպանության միջոցների մասով հետաքննություն, եւ չպետք է խոչընդոտեն այդպիսի քննությունը:

Հոդված 20

Վեճերի կարգավորումը

Կողմերի միջեւ սույն համաձայնագրի մեկնաբանությունից եւ (կամ) կիրառումից թխող ցանկացած վեճ պետք է կարգավորվի սույն համաձայնագրի «Վեճերի կարգավորում» 4-րդ հավելվածով սահմանված կանոններին եւ ընթացակարգերին համապատասխան:

Հոդված 21

Տեղեկությունների թափանցիկությունն ու փոխանակումը

1. Յուրաքանչյուր Կողմ, իր համապատասխան օրենքների կամ կարգավորումների համաձայն, ապահովում է, որ իր՝ ընդհանուր կիրառության օրենքները եւ կարգավորումները, ինչպես նաեւ իր համապատասխան միջազգային համաձայնագրերը, որոնք առնչվում են սույն համաձայնագրով նախատեսված որեւէ հարցի, անհապաղ հրապարակվեն ամենաուշը դրանք ուժի մեջ մտնելու օրվանից կամ

որեւէ այլ կերպ հանրությանը հասանելի դառնան, այդ թվում՝ հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային տարբերակով:

2. Հնարավոր առավելագույն չափով յուրաքանչյուր Կողմ պետք է մյուս Կողմին ծանուցի ցանկացած միջոցի մասին, որը Կողմի կարծիքով կարող է էականորեն ազդել սույն համաձայնագրի գործողության վրա կամ այլ կերպ էականորեն ազդել մյուս Կողմի՝ սույն համաձայնագրով սահմանված շահերի վրա:

Հոդված 22

Գաղտնի տեղեկատվությունը

1. Յուրաքանչյուր Կողմ, իր համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն, պահպանում է մյուս Կողմի՝ սույն համաձայնագրին համապատասխան գաղտնի տրամադրած տեղեկությունների գաղտնիությունը:

2. Սույն համաձայնագրով որեւէ Կողմից չի պահանջվում այնպիսի տեղեկատվություն կամ տեղեկատվությանը հասանելիություն ապահովել, որի բացահայտումը կխոչընդոտի օրենսդրության կիրառմանը, կամ որի բացահայտումն արգելված կամ սահմանափակված է իր օրենքներով եւ կարգավորումներով կամ այլ կերպ կարող է հակասել հանրային շահին կամ խախտել է թե՛ պետական, թե՛ մասնավոր առանձին ձեռնարկությունների (ցանկացած տնտեսավարող սուբյեկտի) օրինական առետրային շահերը:

Հոդված 23

Էլեկտրոնային առևտուրը

1. Սույն հոդվածը կիրառվում է էլեկտրոնային առևտրի վրա ազդող Կողմի կողմից ընդունված կամ պահպանվող միջոցների նկատմամբ:

2. Կողմերը ճանաչում են էլեկտրոնային առևտրի միջոցով ապահովվող տնտեսական աճը եւ հնարավորությունները, էլեկտրոնային առևտրի դինամիկ եւ նորարարական բնույթը, որը դրական ազդեցություն է ունենում Կողմերի միջեւ փոխադարձ առևտրի աճի վրա, ինչպես նաեւ էլեկտրոնային առևտրի նկատմամբ սպառողների վստահության խթանման կարելիությունը:

3. Արդյունավետ միջսահմանային առեւտուրը դյուրացնելու նպատակով Կողմերը պետք է ձգտեն օպտիմալացնել եւ պարզեցնել մաքսազերծման գործընթացներն Ազատ առեւտրի գոտիներում կամ էլեկտրոնային առեւտրի սուբյեկտների պահեստներում, որոնք նախատեսված են իրենց էլեկտրոնային առեւտրի գործունեության համար:

4. Կողմերը ճանաչում են էլեկտրոնային առեւտրին առնչվող ցանկացած ոչ անհրաժեշտ կարգավորող բեռից խուսափելու կարելիությունը:

5. Կողմերը չպետք է ժխտեն, որ էլեկտրոնային ստորագրություններն ունեն նույն իրավական ուժն ու վավերականությունը, ինչ ոչ էլեկտրոնային ստորագրությունները, եթե իրենց օրենքներով ու կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ: Ավելի ստույգ, սույն կետում նշված էլեկտրոնային ստորագրությունները պետք է համապատասխանեն Կողմի օրենքներով ու կանոնակարգերով սահմանված իրավական պահանջներին:

6. Կողմերը պետք է ձգտեն փոխադարձաբար ճանաչել էլեկտրոնային ստորագրությունները, եթե կիրառելի է:

7. Կողմերից յուրաքանչյուրը պետք է ձգտի էլեկտրոնային եղանակով հանրամատչելի դարձնի Կողմերի միջեւ իրականացվող առեւտրին առնչվող կարգավորող փաստաթղթերը:

8. Կողմերը ճանաչում են էլեկտրոնային առեւտրից օգտվողների անձնական տվյալների պաշտպանության տնտեսական եւ սոցիալական առավելությունները եւ էլեկտրոնային առեւտրի նկատմամբ սպառողների վստահության բարձրացման գործում դրա կատարած ներդրումը:

9. Կողմերը պետք է ընդունեն կամ պահպանեն այնպիսի միջոցներ, որոնք ապահովում են անձնական տվյալների պաշտպանությունը, այդ թվում՝ անձնական տվյալների անդրսահմանային փոխանցումը եւ դրան առնչվող պայմաններն ու պահանջները՝ իրենց օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան:

10. Յուրաքանչյուր Կողմ պետք է նշանակի համակարգող, որը, ընդհանուր առմամբ, պատասխանատու կլինի մյուս Կողմի եւ Համատեղ կոմիտեի հետ

հաղորդակցության համար՝ սույն հոդվածի կիրարկումից բխող ցանկացած հարցերի առնչությամբ:

11. Կողմերի միջև փոխըմբռնման խթանման կամ սույն գլխից բխող հատուկ հարցերի լուծման նպատակով Կողմը կարող է սույն համաձայնագրի 27-րդ հոդվածին (Համակարգողները) համապատասխան սահմանված իր համակարգողի միջոցով մյուս Կողմի հետ խորհրդակցություններ անցկացնելու պահանջ ներկայացնել:

12. Նման խորհրդակցությունները երկու Կողմերի համաձայնության դեպքում կարող են իրականացվել Կողմերի կողմից համաձայնեցված ցանկացած եղանակով:

Հոդված 24

Տնտեսական համագործակցությունը

1. Կողմերը ճանաչում են տնտեսական համագործակցության կարելիությունը եւ համաձայնում են ընդլայնել համագործակցությունը փոխշահավետ ոլորտներում՝ հաշվի առնելով Կողմերի զարգացման եւ կարողությունների տարբեր մակարդակները:

2. Կողմերը պետք է խրախուսեն եւ հեշտացնեն իրենց համապատասխան պետական մարմինների միջև համագործակցությունը տնտեսական համագործակցությունը եւ անհրաժեշտության դեպքում՝ Կողմերի ձեռնարկությունների միջև համագործակցությունը խթանելու եւ իրականացնելու նպատակով:

Հոդված 25

Հավելվածները

Սույն համաձայնագրի հավելվածները սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

Հոդված 26

Համատեղ կոմիտեն

1. Կողմերը ստեղծում են յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչներից բաղկացած Համատեղ կոմիտե, որը համանախագահում են երկու ներկայացուցիչներ՝ մեկը՝ ԵԱՏՄ-ից եւ դրա անդամ պետությունների կողմից՝ ի դեմս Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամներից մեկի, իսկ մյուսը՝ Մոնղոլիայի էկոնոմիկայի եւ զարգացման նախարարության եւ (կամ) վերջինիս իրավահաջորդների կողմից: Կողմերին ներկայացնում են այդ նպատակով պատշաճ լիազորված ավագ պաշտոնյաներ:

2. Համատեղ կոմիտեի իրենց համապատասխան ներկայացուցիչների վերաբերյալ Կողմերը պետք է միմյանց տեղեկատվություն տրամադրեն ոչ ուշ, քան դրա նիստն անցկացնելուց 30 (երեսուն) օր առաջ:

3. Համատեղ կոմիտեի խնդիրներն են՝

ա) մշտադիտարկել եւ ուսումնասիրել սույն համաձայնագրի կիրառության եւ գործողության հետ կապված բոլոր հարցերը,

բ) ուսումնասիրել Կողմերի միջեւ առեւտրային հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունները,

գ) ուսումնասիրել եւ Կողմերի դիտարկմանը ներկայացնել սույն համաձայնագրում կատարված փոփոխությունները, եւ

դ) իրականացնել սույն համաձայնագրի շրջանակներում ցանկացած հարցի հետ կապված այլ գործողություններ, որոնք փոխանցվել են իրեն Կողմերի կողմից՝ սույն համաձայնագրի կիրառման շրջանակներում եւ դրա նպատակներով:

4. Իր գործառույթներն իրականացնելու նպատակով Համատեղ կոմիտեն կարող է հիմնել մշտական կամ ժամանակավոր ենթակոմիտեներ կամ աշխատանքային խմբեր եւ նրանց վստահել հատուկ հարցերի շուրջ հանձնարարականների կատարումը:

5. Համատեղ կոմիտեի բոլոր որոշումներն ու առաջարկությունները պետք է ընդունվեն Կողմերի համաձայնությամբ:

6. Համատեղ կոմիտեի հանդիպումները, որպես կանոն, պետք է անցկացվեն առնվազն տարին մեկ անգամ, յուրաքանչյուր Կողմում՝ ըստ հերթականության, եթե Կողմերի միջեւ առկա չէ այլ պայմանավորվածություն:

7. Ցանկացած Կողմի պահանջով կարող են անցկացվել նաեւ հատուկ նիստեր: Այդպիսի նիստերը հնարավորինս պետք է անցկացվեն պահանջող Կողմի տարածքում՝ համապատասխան պահանջն ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում, եթե Կողմերի միջեւ առկա չէ այլ պայմանավորվածություն:

8. Կողմերը ներդաշնակեցնում են Համատեղ կոմիտեի ընթացակարգային կանոնները եւ դրանց հավանություն են տալիս Համատեղ կոմիտեի հետ առաջին հանդիպման ժամանակ:

Հոդված 27

Համակարգողները

1. Սույն համաձայնագրի արդյունավետ իրականացման, ինչպես նաեւ սույն համաձայնագրով նախատեսված ցանկացած հարցով Կողմերի միջեւ հաղորդակցությունը դյուրացնելու նպատակով յուրաքանչյուր Կողմ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ 1 (մեկ) ամսվա ընթացքում նշանակում է համակարգողի կամ համակարգողների եւ մյուս Կողմին տեղեկություն է տրամադրում նրանց վերաբերյալ: Իրենց համակարգողների տվյալներում որեւէ փոփոխության դեպքում Կողմերն անմիջապես միմյանց ծանուցում են այդ մասին:

2. Յուրաքանչյուր Կողմի համակարգողի գործառույթներն են՝

ա) լսել մյուս Կողմի մտահոգություններն ու հարցերը,

բ) պատասխանել սույն կետի «ա» ենթակետում նշված մտահոգություններին կամ հարցերին՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով տվյալ Կողմի համապատասխան մարմինների հետ:

3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով չպետք է կանխվի կամ սահմանափակվի Կողմերից մեկի գործարար հատվածի ուղիղ կապը մյուս Կողմի համապատասխան մարմինների հետ:

4. Կողմերից մեկի պահանջով մյուս Կողմի համակարգողը կամ համակարգողները նշանակում են այն հարցի մասով պատասխանատու գերատեսչությունը կամ պաշտոնատար անձին, որը կարող է ազդեցություն թողնել

Կողմերի միջեւ առեւտրի վրա, եւ պատշաճ աջակցություն են տրամադրում համապատասխան հաղորդակցությունը դյուրացնելու համար:

Հոդված 28

Համաձայնագրի գործողության ժամկետը, դրանից դուրս գալը եւ դադարեցումը

1. Սույն համաձայնագիրը պետք է ուժի մեջ մնա 3 (երեք) տարի ժամկետով եւ դրանից հետո երկարաձգվի եւս 3 (երեք) տարի ժամկետով, եթե Կողմերն այլ բան չպայմանավորվեն:

2. Առաջին եռամյա ժամկետի ավարտից հետո՝ 1 (մեկ) տարվա ընթացքում, Կողմերը պարտավորվում են վերանայել սույն համաձայնագիրը՝ առեւտուրը դյուրացնելու եւ տուրքերը, ինչպես նաեւ Կողմերի միջեւ իրականացվող ըստ էության ողջ առեւտրի վերաբերյալ առեւտրային մյուս սահմանափակող կանոնակարգերը վերացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր կողմ կարող է դադարեցնել սույն համաձայնագրի գործողությունը՝ սույն համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին ծանուցելով մյուս Կողմին: Սույն համաձայնագրի դադարեցումը պետք է ուժի մեջ մտնի վերջին Կողմի կողմից ծանուցումն ստանալու ամսվան հաջորդող տասներեքերորդ ամսվա առաջին օրը:

4. Սույն համաձայնագրի գործողությունը դադարում է ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից դուրս եկող ԵԱՏՄ ցանկացած անդամ պետության համար ԵԱՏՄ-ի մասին պայմանագրից դուրս գալու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից: Նման դեպքերի վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը ծանուցում է Մոնղոլիային պայմանագրից դուրս գալու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 6 (վեց) ամիս առաջ: Կողմերը խորհրդակցում են միմյանց միջեւ՝ նման դեպքերի հետեւանքները սույն համաձայնագրի վրա դիտարկելու նպատակով:

Հոդված 29

Փոփոխությունները

1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ:

2. Սույն համաձայնագրի բոլոր փոփոխությունները կազմում են սույն համաձայնագրի բաղկացուցիչ մասը եւ կատարվում են սույն համաձայնագրին կից առանձին արձանագրությունների ձեւով, որոնք ուժի մեջ են մտնում սույն համաձայնագրի 31-րդ հոդվածով նախատեսված կարգով, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

3. Եթե ԱՀԿ համաձայնագրի կամ սույն համաձայնագրում ինկորպորացված որեւէ այլ համաձայնագրի, որում երկու Կողմն էլ որպես կողմ են հանդես գալիս, ցանկացած դրույթ փոփոխության է ենթարկվում, Կողմերը պետք է խորհրդակցեն սույն համաձայնագիրը համապատասխանաբար փոփոխելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հոդված 30

Համաձայնագրին ԵԱՏՄ նոր անդամ պետության միանալը

1. ԵԱՏՄ ցանկացած նոր անդամ պետություն միանում է սույն համաձայնագրին միանալու պայմանների վերաբերյալ Կողմերի միջեւ փոխադարձաբար համաձայնեցված բանակցությունների միջոցով: Այդ միանալն իրականացվում է սույն համաձայնագրին կցվող լրացուցիչ արձանագրությամբ:

2. ԵԱՏՄ-ն անհապաղ գրավոր ծանուցում է Մոնղոլիային ԵԱՏՄ-ին միանալու թեկնածու երկրի ցանկացած կարգավիճակի վերաբերյալ, որը կարող է տրամադրվել ցանկացած երրորդ երկրի, ինչպես նաեւ ԵԱՏՄ-ին միանալու ցանկացած այլ դեպքերի վերաբերյալ:

Հոդված 31

Ուժի մեջ մտնելը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվան հաջորդող վաթսունմեկերորդ օրը, որով հավաստվում է, որ ԵԱՏՄ-ն, ԵԱՏՄ անդամ պետությունները եւ Մոնղոլիան ավարտել են սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց համապատասխան ներքին իրավական ընթացակարգերը: Այդպիսի ծանուցումներն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Մոնղոլիայի միջեւ դիվանագիտական ուղիներով:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, դրա համար պատշաճ լիազորված լինելով, ստորագրեցին սույն համաձայնագիրը:

Կատարված է Մինսկ քաղաքում 2025 թվականի հունիսի 27-ին, երկու բնօրինակից՝ անգլերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կողմից՝

**Մոնղոլիայի Հանրապետության
կողմից՝**

Բելառուսի Հանրապետության կողմից՝

Ղազախստանի Հանրապետության կողմից՝

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝

Ռուսաստանի Դաշնության կողմից՝

Եվրասիական տնտեսական միության կողմից՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Սույն հավելվածի նպատակներով «ՆՀ-ի ծածկագիրը» եւ «Նկարագրությունը» վերաբերում են 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ ուժի մեջ մտած՝ Եվրասիական տնտեսական միության անվանացանկի համապատասխան ապրանքային ենթադիրքերին եւ դրա համապատասխան նկարագրությանը:

Ոչ մի դեպքում Կողմերի կողմից սույն հավելվածում թվարկվող ծագման ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքի դրույքաչափը չպետք է լինի ավելի բարձր, քան սույն հավելվածի 4-րդ սյունակում նշված համապատասխան համաձայնեցված պարտադիր դրույքաչափը:

Թիվը	ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային առանձնաշնորհումներ
1	2	3	4
1	0201 20	- Ոսկրահան չարված այլ հատվածամասեր	0%
2	0201 30	- Ոսկրահան արված միս	0%
3	0202 20	- Ոսկրահան չարված այլ հատվածամասեր	0%
4	0202 30	- Ոսկրահան արված միս	0%
5	0204 10	- Գառան թարմ կամ պաղեցրած մսեղիք եւ կիսամսեղիք	0%
6	0204 21	- - Մսեղիք եւ կիսամսեղիք	0%
7	0204 22	- - Ոսկրահան չարված այլ հատվածամասեր	0%
8	0204 23	- - Ոսկրահան արված	0%
9	0204 41	- - Մսեղիք եւ կիսամսեղիք	0%
10	0204 42	- - Ոսկրահան չարված այլ հատվածամասեր	0%
11	0204 50	- Այծի միս	0%
12	0205 00	Ձիերի, ավանակների, ջորիների եւ կիսագրաստների միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	0%
13	0206 10	- Խոշոր եղջերավոր անասունների՝ թարմ կամ պաղեցրած	0%
14	0206 21	- - Լեզուներ	0%
15	0206 29	- - Այլ	0%
16	0206 41	- - Լյարդ	0%

Թիվը	ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային առանձնաշնորհումներ
17	0206 80	- Այլ՝ թարմ կամ պաղեցրած	0%
18	0206 90	- Այլ՝ սառեցրած	0%
19	0208 90	- Այլ	0%
20	0210 11	- - Ազդեր, թիակներ եւ դրանց հատվածամասեր՝ ոսկրահան չարված	0%
21	0210 12	- - Կրծքամիս (ճարպի շերտով) եւ դրա հատվածամասեր	0%
22	0210 20	- Խոշոր եղջերավոր անասունի միս	0%
23	0210 99	- - Այլ	0%
24	0403 90	- Այլ	0%
25	0405 90	- Այլ	0%
26	0406 90	- Այլ պանիրներ	ԱԱԲ ռեժիմով կիրառվող դրույքաչափից 50% նվազեցում
27	0409 00	Բնական մեղր	0%
28	0410 90	- Այլ	0%
29	0504 00	Կենդանիների (բացի ձկներից) աղիքներ, պարկեր եւ ստամոքսներ՝ ամբողջական եւ կտորներով, թարմ, պաղեցված, սառեցված, աղ դրված, աղաջրով, չորացված կամ ապխտած	0%
30	0505 90	- Այլ	0%
31	0506 10	- Օսեին եւ ոսկորներ՝ թթվով մշակված	0%
32	0506 90	- Այլ	0%
33	0507 90	- Այլ	0%
34	0510 00	Համալար մոխրագույն, կղբեշիթ, ցիվետա եւ մուշկ, իսպանական բզեզ, լեղի՝ չորացրած կամ ոչ, գեղձեր եւ դեղագործական արտադրանքի արտադրության մեջ օգտագործվող կենդանական ծագում ունեցող այլ մթերքներ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած կամ այլ կերպ ժամանակավորապես պահպանված	0%
35	0511 99	- - Այլ	0%
36	0704 90	- Այլ	0%
37	0710 10	- Կարտոֆիլ	0%
38	0710 80	- Այլ բանջարեղեն	0%
39	0712 39	- - Այլ	0%
40	0712 90	- Այլ բանջարեղեն, բանջարեղենի խառնուրդներ	0%
41	0810 90	- - Այլ	0%
42	0811 90	- Այլ	0%
43	1003 90	- Այլ	0%

Թիվը	ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային առանձնաշնորհումներ
44	1502 10	- Հալեցրած ճարպ	0%
45	1502 90	- Այլ	0%
46	1506 00	Կենդանական ծագման այլ ճարպեր եւ յուղեր եւ դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց քիմիական կազմի փոփոխման	0%
47	1514 19	- - Այլ	0%
48	1514 91	- - Յուղ հում	0%
49	1515 90	- - Այլ	0%
50	1516 10	- Կենդանական ծագման ճարպեր եւ յուղեր եւ դրանց զտամասերը	0%
51	1601 00	Երշիկներ եւ մսից, մսային ենթամթերքներից, արյունից կամ միջատներից պատրաստված համանման մթերքներ, դրանցից պատրաստված պատրաստի սննդամթերք	0%
52	1602 10	- Հոմոգենացված պատրաստի մթերքներ	0%
53	1602 20	- Ցանկացած կենդանու լյարդից	0%
54	1602 50	- Խոշոր եղջերավոր անասունի մսից	0%
55	1602 90	- Այլ, ներառյալ՝ ցանկացած կենդանու արյունից պատրաստի մթերք	0%
56	1604 19	- - Այլ	0%
57	1704 90	- - Այլ	0%
58	1806 90	- Այլ	0%
59	1902 11	- - Ձվի պարունակությամբ	0%
60	1902 19	- - Այլ	0%
61	1902 30	- Մակարոնային այլ արտադրատեսակներ	0%
62	2007 10	- Հոմոգենացված պատրաստի մթերքներ	0%
63	2007 91	- - Ցիտրուսային պտուղներ	0%
64	2007 99	- - Այլ	0%
65	2009 71	- Բրիկսի թիվը՝ 20-ից ոչ ավելի	0%
66	2009 89	- - Այլ	0%
67	2009 90	- Հյութերի խառնուրդներ	0%
68	2104 10	- Պատրաստի ապուրներ ու արգանակներ եւ նախապատրաստուկներ՝ դրանք պատրաստելու համար	0%
69	2106 10	- Սպիտակուցային խտածոներ (կոնցենտրատներ) եւ տեքստուրացված սպիտակուցային նյութեր	0%
70	2106 90	- Այլ	0%
71	2202 10	- Ջրեր, ներառյալ՝ հանքային եւ գազավորված ջրերը, որոնք պարունակում են շաքարի կամ այլ քաղցրացնող	0%

Թիվը	ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային առանձնաշնորհումներ
		կամ համաբուրավետիչ նյութերի հավելումներ	
72	2202 99	- - Այլ	0%
73	2203 00	Գարեջուր ածիկային	ԱԱԲ ռեժիմով կիրառվող դրույքաչափից 25% նվազեցում
74	2208 20	- Սպիրտային թրմօղի, որը ստացվել է խաղողի գինու կամ խաղողի կնճեռի թորումից	0%
75	2208 30	- Վիսկի	0%
76	2208 60	- Օղի	ԱԱԲ ռեժիմով կիրառվող դրույքաչափից 25% նվազեցում
77	2208 90	- - Այլ	0%
78	2301 10	- Խոշոր եւ մանր աղացվածքի ալյուր եւ մսից կամ մսի ենթասննդամթերքից հատիկներ (գրանուկներ). ճարպատակուցք	0%
79	2302 30	- Ցորենի	0%
80	2309 10	- Շների կամ կատունների կեր՝ մանրածախ վաճառքի համար բաժնեծրարված	0%
81	2309 90	- Այլ	0%
82	2501 00	Աղ (ներառյալ սեղանի եւ բնափոխված աղը) եւ մաքուր նատրիումի քլորիդ՝ ջրի մեջ լուծված կամ չլուծած, ինչպես նաեւ այնպիսի ազդանյութերի հավելումների պարունակությամբ, որոնք խոչընդոտում են մասնիկների իրար կպչելը կամ ապահովում են սորունությունը. ծովի ջուր	0%
83	2529 21	- - 97% զանգվածային բաժին կամ պակաս կալցիումի ֆտորիդի պարունակությամբ	0%
84	2529 22	- - 97 % զանգվածային բաժնից ավելի կալցիումի ֆտորիդի պարունակությամբ	0%
85	2603 00	Պղնձի հանքաքարեր եւ խտահանքեր	0%
86	2609 00	Անագի հանքաքարեր եւ խտահանքեր	0%
87	2611 00	Վոլֆրամի հանքաքարեր եւ խտահանքեր	0%
88	2613 90	- - Այլ	0%
89	3101 00	Կենդանական կամ բուսական ծագման պարարտանյութեր՝ խառնած կամ չխառնած, քիմիական եղանակով մշակված կամ չմշակված. պարարտանյութեր՝ ստացված բուսական կամ կենդանական ծագման մթերքը խառնելու կամ քիմիական մշակման ենթարկելու միջոցով	0%
90	3304 10	- Շրթունքների շպարման միջոցներ	0%

Թիվը	ՆՀ-ի ծածկագիրը	Նկարագրությունը	Սակագնային առանձնաշնորհումներ
91	3304 30	- Մատնահարդարման կամ ոտնահարդարման միջոցներ	0%
92	3304 99	- - Այլ	0%
93	3305 10	- Շամպուններ	0%
94	3305 90	- - Այլ	0%
95	3306 10	- Ատամները մաքրելու միջոցներ	0%
96	3401 20	- Օճառ՝ այլ ձեւերով	0%
97	3402 50	- Պատրաստի արտադրատեսակներ՝ բաժնեծրարված մանրածախ վաճառքի համար	0%
98	3503 00	Դոնդողանյութ (այդ թվում՝ ուղղանկյուն (ներառյալ քառակուսի) թերթերով, մակերեսային մշակմամբ կամ առանց մշակման, ներկած կամ չներկած) եւ դոնդողանյութի ածանցյալներ. ձկնասոսիձ. կենդանական ծագման այլ սոսինձներ՝ բացի 3501 ապրանքային դիրքում ընդգրկված կազեինի սոսնձից	0%
99	3926 90	- - Այլ	0%
100	4101 20	- Ամբողջական մորթեր՝ չկրկնորդված, յուրաքանչյուրը չոր վիճակում՝ 8 կգ-ից ոչ ավելի, չոր աղադրած վիճակում՝ 10 կգ կամ թարմ, թաց աղադրած կամ այլ կերպ պահածոյացված վիճակում՝ 16կգ զանգվածով	0%
101	4101 50	- Ամբողջական մորթեր՝ 16 կգ-ից ավելի զանգվածով	0%
102	4101 90	- Այլ, ներառյալ՝ մեջքակաշիները, կիսամեջքակաշիներն ու որովայնակաշիները	0%
103	4102 10	- Բրդյա ծածկույթով	0%
104	4102 21	- - Աղջրած	0%
105	4102 29	- - Այլ	0%
106	4103 90	- Այլ	0%
107	4104 11	- - Չհղկված դիմերեսներ՝ չկրկնորդված, դիմերեսներ՝ կրկնորդված	0%
108	4104 19	- - Այլ	0%
109	4104 41	- - Չհղկված դիմերեսներ՝ չկրկնորդված, դիմերեսներ՝ կրկնորդված	0%
110	4104 49	- - Այլ	0%
թ) ապրանքներ, որոնք արդյունահանվում են իր տարածքային ջրերից դուրս գտնվող ծովային նստվածքից կամ ընդերքից՝ պայմանով, որ Կողմն ունի այդ նստվածքի կամ ընդերքի մշակման միանձնյա իրավունք.

ժ) այնտեղ իրականացվող արտադրության եւ սպառման հետեւանքով առաջացած թափոնները եւ մնացուկները.

ժա) այնտեղ հավաքված եւ օգտագործված ապրանքները՝ պայմանով, որ նման ապրանքները պիտանի են միայն հումքի վերականգնման համար.

ժբ) Կողմում գրանցված տիեզերանավի վրա տիեզերական տարածությունում արտադրված ապրանքները. եւ

ժգ) Կողմի տարածքում միայն սույն հոդվածի «ա»-«ժբ» ենթակետերում նշված ապրանքներից արտադրված կամ ստացված ապրանքները:

Հոդված 5

Ծագում չունեցող նյութերի արժեքը

Սույն Կանոնների նպատակներով՝ ծագում չունեցող նյութերի արժեքի տոկոսը (այսուհետ՝ ԾՉՆ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԾՉՆ} = \frac{\text{Ծագում չունեցող նյութերի արժեք}}{\text{FCA արժեք}} * 100\%,$$

որտեղ ծագում չունեցող նյութերի արժեքը՝

ա) նյութերի մաքսային արժեքն է՝ Կողմի տարածք ներմուծվելու պահի դրությամբ, կամ

բ) սկզբում որոշված գինը, որը ծագում չունեցող նյութերի համար վճարվել է կամ ենթակա է վճարման այն Կողմի տարածքում, որտեղ իրականացվում է մշակումը կամ վերամշակումը, եթե մաքսային արժեքը հայտնի չէ կամ չի կարող որոշվել:

Հոդված 6

Ոչ բավարար մշակումը կամ վերամշակումը

1. Առանձին կամ համակցությամբ իրականացվող հետևյալ գործողությունները համարվում են ոչ բավարար սույն Կանոնների 3-րդ հոդվածի պահանջների կատարման համար.

ա) փոխադրման եւ պահպանման ընթացքում արտադրանքի պահպանվածությունն ապահովելու համար իրականացվող գործողություններ,

բ) սառեցում կամ հալեցում,

գ) փաթեթավորում եւ վերափաթեթավորում,

դ) փոշու, օքսիդի, յուղի, ներկի կամ այլ պատվածքների լվացում, մաքրում, հեռացում,

ե) մանածագործվածքի (տեքստիլի) արդուկում կամ մամլում,

զ) ներկում, ողորկում, լաքապատում, յուղում,

է) հացահատիկների եւ բրնձի թեփահանում, մասնակի կամ լրիվ սպիտակեցում, ողորկում եւ հղկում,

ը) շաքարի գունավորման կամ կտոր շաքարի ստացման հետ կապված գործողություններ,

թ) մրգերի, ընկույզների եւ բանջարեղենի կեղեւահանում, կորիզների եւ կեղեւի հեռացում,

ժ) պարզ սրում, աղում,

ժա) կտրատում,

ժբ) մաղում, ընտրում, տեսակավորում, դասակարգում,

ժգ) շշերի, բանկանների, սրվակների, պարկերի, արկղերի, տուփերի մեջ լցնում, մակերեսային վրա ամրակցում եւ փաթեթավորման մյուս բոլոր գործողությունները,

ժդ) մականշվածքի, պիտակների, լոգոտիպերի եւ նման այլ տարբերակիչ նշանների զետեղում կամ տպում արտադրանքի կամ դրա փաթեթվածքի վրա,

ժե) արտադրանքի (բաղադրիչների) խառնում, որը չի հանգեցնում ստացված արտադրանքի՝ սկզբնական բաղադրիչներից էական տարբերության,

ժզ) արտադրանքի պարզ հավաքակցում կամ արտադրանքի կազմատում մասերի,

ժէ) կենդանիների սպանդ, մսի տեսակավորում, եւ

ժը) ապրանքների օգտագործում իրենց նպատակային նշանակությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի նպատակներով «պարզ» բառը բնութագրում է այնպիսի գործողություններ, որոնց համար չեն պահանջվում հատուկ հմտություններ կամ հենց այդպիսի գործողությունների կատարման համար նախատեսված մեքենաներ, ապարատներ կամ սարքավորումներ:

Հոդված 7

Ծագման բնութագրերի համակցումը

Չհակասելով սույն Կանոնների 3-րդ հոդվածին՝ մի Կողմի ծագում ունեցող ապրանքները, որոնք որպես նյութեր օգտագործվում են մյուս Կողմում ապրանքների արտադրության մեջ, համարվում են այն Կողմի ծագում ունեցող, որտեղ իրականացվել են վերջին գործողությունները՝ բացի սույն Կանոնների 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված գործողություններից: Հետագա մշակման կամ վերամշակման համար օգտագործվող ապրանքների ծագումը հավաստվում է փաստաթղթային ապացույցով:

Հոդված 8

De Minimis (Ոչ էական)

1. Այն ապրանքները, որոնք սակագնային դասակարգման փոփոխության չեն ենթարկվում, այնուամենայնիվ, համարվում են ծագում ունեցող, եթե ապրանքները բավարարում են սույն գլխի՝ դրանց նկատմամբ կիրառելի մյուս բոլոր պահանջները, եւ ապրանքների արտադրության մեջ օգտագործվող եւ սակագնային դասակարգման անհրաժեշտ փոփոխության չենթարկվող՝ ծագում չունեցող բոլոր նյութերի արժեքը չի գերազանցում այդպիսի ապրանքների FCA արժեքի տասը (10) տոկոսը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված նյութերի արժեքը ներառվում է ծագում չունեցող նյութերի արժեքի մեջ՝ դրանց նկատմամբ կիրառելի ցանկացած ԾՁՆ պահանջի դեպքում:

Հոդված 9

Պարագաները, պահեստամասերը, գործիքները եւ հրահանգչական կամ տեղեկատվական այլ նյութեր

1. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված պարագաները, պահեստամասերը, գործիքները եւ հրահանգչական կամ տեղեկատվական այլ նյութեր համարվում են նույն ծագումն ունեցող, ինչ այն ապրանքները, որոնց հետ դրանք առաքվում են:

2. Սույն հոդվածի նպատակներով պարագաները, պահեստամասերը, գործիքները եւ հրահանգչական կամ տեղեկատվական այլ նյութեր ներառվում են, երբ՝

ա) պարագաները, պահեստամասերը, գործիքները եւ հրահանգչական կամ

տեղեկատվական այլ նյութեր դասակարգվում եւ առաքվում են այդ ապրանքների հետ, սակայն դրանց համար այդ ապրանքներից առանձին հաշիվ-ապրանքագիր չի ներկայացվում, եւ

բ) ապրանքների հետ ներկայացվող պարագաների, պահեստամասերի, գործիքների եւ հրահանգչական կամ տեղեկատվական նյութերի տեսակները, քանակները եւ արժեքը սովորական են այդպիսի ապրանքների համար:

3. Չհակասելով սույն հոդվածի 1-ին կետին՝ ապրանքների նկատմամբ կիրառելի ԾՁՆ պահանջը հաշվարկելիս պարագաների, պահեստամասերի, գործիքների եւ հրահանգչական կամ տեղեկատվական նյութերի արժեքը հաշվի է առնվում որպես ծագում ունեցող նյութեր կամ ծագում չունեցող նյութեր՝ կախված համապատասխան դեպքից:

Հոդված 10

Մանրաձախ վաճառքի համար նախատեսված փաթեթավորման նյութերը եւ տարաները

1. Փաթեթավորման նյութերը եւ տարաները, որոնցում ապրանքները փաթեթավորված են մանրաձախ վաճառքի նպատակով, ապրանքների հետ դասակարգվելու դեպքում համարվում են նույն ծագումն ունեցող, ինչ այն ապրանքները, որոնք պարունակվում են դրանցում:

2. Չհակասելով սույն հոդվածի 1-ին կետին՝ ապրանքների նկատմամբ կիրառելի ԾՁՆ պահանջը հաշվարկելիս մանրաձախ վաճառքի համար օգտագործվող փաթեթավորման նյութերի եւ տարաների արժեքը հաշվի է առնվում որպես ծագում ունեցող նյութեր կամ ծագում չունեցող նյութեր՝ կախված համապատասխան դեպքից:

Հոդված 11

Տեղափոխման նախատեսված փաթեթավորման նյութերը եւ տարաները

Բացառապես փոխադրման համար նախատեսված փաթեթավորման նյութերը եւ բեռնարկղերը, որոնցում փաթեթավորված են ապրանքները, հաշվի չեն առնվում

ապրանքների ծագում ունենալը որոշելու հարցում:

Հոդված 12

Հավաքածուները

Ներդաշնակեցված համակարգի մեկնաբանության Ընդհանուր կանոնների 3-րդ կանոնի համաձայն՝ սահմանված հավաքածուները համարվում են ծագում ունեցող, եթե բոլոր բաղադրիչները ծագում ունեցող են: Այնուամենայնիվ, եթե հավաքածուն կազմված է ծագում ունեցող եւ ծագում չունեցող ապրանքներից, ապա հավաքածուն ամբողջությամբ համարվում է ծագում ունեցող՝ պայմանով, որ ծագում չունեցող ապրանքների արժեքը չի գերազանցում հավաքածուի FCA արժեքի տասնհինգ (15) տոկոսը:

Հոդված 13

Միջանկյալ ապրանքներ

Եթե ծագում չունեցող նյութերը բավարարում են սույն Կանոնների 3-րդ հոդվածով նախատեսված պահանջները, ապա դրանցից ստացվող ապրանքները համարվում են ծագում ունեցող, եւ այդ ապրանքները այլ ապրանքների հետագա արտադրության մեջ օգտագործվելու դեպքում դրանցում պարունակվող՝ ծագում չունեցող նյութերը հաշվի չեն առնվում:

Հոդված 14

Անուղղակի նյութեր

Ապրանքների ծագումը որոշելու համար հաշվի չի առնվում հետեւյալ անուղղակի նյութերի ծագումը, որոնք կարող են օգտագործված լինել տվյալ ապրանքների արտադրության մեջ, սակայն չկազմել այդ ապրանքների մի մասը.

ա) վառելիք եւ էլեկտրական էներգիա,

բ) գործիքներ, դրոշմներ եւ մամլակաղապարներ,

գ) սարքավորումների ու շենքերի պահպանության համար օգտագործվող պահեստամասեր եւ նյութեր,

դ) արտադրության մեջ կամ սարքավորումների ու շենքերի շահագործման համար օգտագործվող քսանյութեր, քսուքներ, բաղադրանյութեր եւ այլ նյութեր,

ե) ձեռնոցներ, ակնոցներ, կոշիկներ, հագուստ, անվտանգության սարքավորումներ,

զ) ապրանքների փորձարկման կամ զննման համար օգտագործվող սարքավորումներ, սարքեր,

է) կատալիզատոր եւ լուծիչներ, եւ

ը) ցանկացած այլ ապրանք, որը տվյալ ապրանքի մաս չի կազմում, սակայն դրա օգտագործումն այդ ապրանքի արտադրության մեջ կարող է ներկայացվել որպես տվյալ արտադրության մի մաս:

Հոդված 15

Խմբաքանակի անմիջական փոխադրումը

1. Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմը տրամադրվում է ծագում ունեցող ապրանքների համար, որոնք փոխադրվում են անմիջապես Կողմերի միջեւ կամ Կողմ չհանդիսացող երկրների տարածքով՝ պայմանով, որ այդ փոխադրման ընթացքում՝

ա) բեռնաթափումից, փոխաբեռնումից, պահպանումից կամ պահպանվածությունն ապահովելու համար նախատեսված որեւէ անհրաժեշտ գործողությունից բացի՝ ապրանքներն այնտեղ չենթարկվեն որեւէ այլ գործողությունների, եւ

բ) ապրանքներն այնտեղ դուրս չբերվեն վաճառքի կամ սպառողական նպատակներով:

2. Այն դեպքում, երբ ծագում ունեցող ապրանքները ներմուծվում են Կողմ չհանդիսացող երկրների տարածքով, ներմուծող Կողմի մաքսային մարմիններին պետք է ներկայացնել հետեւյալ փաստաթղթային ապացույցներից որեւէ մեկը.

ա) Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք տեղափոխման ընթացքի վերաբերյալ տրանսպորտային փաստաթղթեր, որոնցում ներառվում են ապրանքների

ճշգրիտ նկարագրությունը եւ կիրառելիության դեպքում ու փոխադրման պայմաններին համապատասխան՝ նավերի կամ օգտագործված մյուս տրանսպորտային միջոցների անվանումները եւ բեռնարկերի համարները, կամ

բ) Կողմ չհանդիսացող այն երկրների մաքսային մարմինների կողմից տրված փաստաթղթեր, որտեղ ապրանքները տարանցման մեջ են եղել, որոնք պարունակում են ապրանքների նկարագրությունը եւ հաստատում են, որ ապրանքները պահվել (պահպանվել) են մաքսային հսկողության ներքո եւ չեն ձեւափոխվել կամ վերամշակվել այդ երկրի տարածքում՝ սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին համապատասխան:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված փաստաթղթերից բացի՝ կարող է ներկայացվել խմբաքանակի անմիջական փոխադրման փաստը հաստատող ցանկացած այլ հիմնավորող փաստաթուղթ:

4. Եթե հայտարարատուն ներմուծող Կողմի մաքսային մարմիններին չի տրամադրում խմբաքանակի անմիջական փոխադրման փաստը հաստատող փաստաթղթային ապացույցներ, ապա սակագնային առանձնաշնորհումների դեֆին չի տրամադրվում:

Հոդված 16

Երրորդ կողմին ներկայացվող հաշիվ-ապրանքագրեր

Ներմուծող Կողմը ծագում ունեցող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների դեֆին է տրամադրում այն դեպքերում, երբ հաշիվ-ապրանքագիրը տրվում է Կողմ հանդիսացող կամ Կողմ չհանդիսացող երկրում գրանցված անձի կողմից՝ պայմանով, որ այդպիսի ապրանքները համապատասխանեն սույն Կանոնների պահանջներին:

ԲԱԺԻՆ II. ԾԱԳՄԱՆ ԱՊԱՑՈՒՅՑԸ

Հոդված 17

Ընդհանուր պահանջները

1. Մի Կողմի տարածքից ծագող ապրանքների համար ցանկացած Կողմի

տարածք ներմուծման դեպքում տրամադրվում է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ ծագման հետեւյալ ապացույցներից որեւէ մեկը ներկայացնելու դեպքում.

ա) սույն Կանոնների 19-րդ հոդվածի համաձայն տրամադրված Ծագման սերտիֆիկատ (ձեւ ԵԱՄ)՝ բացառությամբ սույն Կանոնների 28-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կամ

բ) սույն Կանոնների 21-րդ հոդվածին համապատասխան կազմված Ծագման հայտարարագիր:

2. Չհակասելով սույն հոդվածի 1-ին կետին՝ սույն Կանոնների 18-րդ հոդվածում նշված դեպքերում ծագում ունեցող ապրանքների համար տրամադրվում է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ առանց սույն հոդվածում նշված փաստաթղթերից որեւէ մեկը ներկայացնելու անհրաժեշտության:

Հոդված 18

Ծագման ապացույցի մասով բացառությունները

Ծագման ապացույց չի պահանջվում ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ ստանալու նպատակով այն դեպքում, երբ մաքսային արժեքը չի գերազանցում երկու հարյուր (200) եվրոն կամ ներմուծող Կողմի արժույթով համարժեք գումարը՝ պայմանով, որ տվյալ ներմուծումը չի կազմում մեկ կամ մեկից ավելի խմբաքանակների մաս, որոնք ողջամտորեն կարող են դիտարկվել որպես ծագման ապացույց ներկայացնելուց խուսափելու նպատակով նախաձեռնված կամ իրականացված միջոց:

Հոդված 19

Ծագման սերտիֆիկատը

1. Ծագման սերտիֆիկատը արտադրողի, արտահանողի կամ նրա լիազորված ներկայացուցչի դիմումի հիման վրա Կողմի լիազորված մարմնի կողմից տրված՝ ապրանքների ծագումը հավաստող փաստաթուղթ է: Դիմումը պետք է ներկայացվի

գրավոր կամ եթե կիրառելի է՝ էլեկտրոնային եղանակով՝ արտահանող Կողմի օրենքներին եւ կանոնակարգերին համապատասխան:

2. Ծագման սերտիֆիկատը տրամադրվում է բնօրինակ թղթային տարբերակով՝ բացառությամբ սույն Կանոնների 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

3. Ծագման սերտիֆիկատը լիազորված մարմնի կողմից տրամադրվում է արտահանումից առաջ կամ դրանից հետո բոլոր այն դեպքերում, երբ արտահանման ենթակա ապրանքները սույն Կանոնների իմաստով կարող են համարվել Կողմի տարածքի ծագում ունեցող:

4. Արտահանող Կողմի լիազորված մարմինն ապահովում է, որ Ծագման սերտիֆիկատները տրամադրվեն ձեւաչափին համապատասխան եւ լրացվեն պատշաճորեն՝ սույն Կանոնների հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Ծագման սերտիֆիկատը ներառում է մեկ խմբաքանակի մեջ ընդգրկված ապրանքները եւ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով վավեր է լիազորված մարմնի կողմից տրամադրման օրվանից 12 (տասներկու) ամիս ժամկետով: Առաքված ապրանքների իրական քաշը չպետք է գերազանցի Ծագման սերտիֆիկատում նշված քաշի հինգ (5) տոկոսը:

Հոդված 20

Ծագման սերտիֆիկատի տրամադրման առանձնահատուկ դեպքերը

1. Այն դեպքում, երբ Ծագման սերտիֆիկատը չի տրամադրվել արտահանումից առաջ, այն կարող է տրվել հետադարձ կարգով: Այս դեպքում Ծագման սերտիֆիկատի վրա պետք է առկա լինեն հետեւյալ բառերը՝ «ՏՐՎԱԾ Է ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺՈՎ» կամ «ՏՐՎԱԾ Է ՀԵՏԻՆ ԱՄՍԱԹՎՈՎ»:

2. Ծագման սերտիֆիկատի գողանալու, կորստյան կամ ոչնչացման դեպքում արտադրողը, արտահանողը կամ դրա լիազորված ներկայացուցիչը կարող են դիմել լիազորված մարմին հաստատված կրկնօրինակի տրամադրման համար: Հաստատված կրկնօրինակի վրա պետք է առկա լինեն «__ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ __ԾԱԳՄԱՆ

ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ» (“DUPLICATE OF THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER_DATE_”) բառերը: Ծագման սերտիֆիկատի հաստատված կրկնօրինակը սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով վավեր է Ծագման սերտիֆիկատի բնօրինակի տրամադրման ամսաթվից հետո ոչ ավելի, քան 12 (տասներկու) ամիս:

3. Ծագման սերտիֆիկատում տեղ գտած պատահական սխալների կամ բացթողումների դեպքում լիազորված մարմինը տալիս է նախկինում տրված Ծագման սերտիֆիկատին փոխարինող Ծագման սերտիֆիկատ, իսկ նախկինում տրված Ծագման սերտիֆիկատը չեղյալ է ճանաչվում: Այս դեպքում Ծագման սերտիֆիկատի վրա պետք է առկա լինեն հետեւյալ բառերը՝ «ՏՐՎԱԾ Է __ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ __ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՓՈԽԱՐԵՆ» (“ISSUED IN SUBSTITUTION FOR THE CERTIFICATE OF ORIGIN NUMBER__DATE_”): Այդ Ծագման սերտիֆիկատը սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով վավեր է դրա տրամադրման ամսաթվից հետո 12 (տասներկու) ամիս ժամկետով:

4. Կողմերի միջեւ՝ ծագում ունեցող այնպիսի ապրանքների փոխադրման դեպքում, որոնք մյուս Կողմերում մշակման կամ վերամշակման չեն ենթարկվել, վերջին Կողմի լիազորված մարմինը տրամադրում է Ծագման սերտիֆիկատին փոխարինող սերտիֆիկատ: Փոխարինող ծագման սերտիֆիկատները տրվում են նախկին Կողմի լիազորված մարմնի կողմից տրված Ծագման սերտիֆիկատի հիման վրա, եւ դրա վրա պետք է առկա լինեն հետեւյալ բառերը՝ «ՏՐՎԱԾ Է __ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ __ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ» (“ISSUED ON THE BASIS OF CERTIFICATE OF ORIGIN NUMBER__DATE_”): Այդ Ծագման սերտիֆիկատը սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով վավեր է դրա տրամադրման ամսաթվից հետո 12 (տասներկու) ամիս ժամկետով:

Հոդված 21

Ծագման հայտարարագիրը

1. Սույն Կանոնների 17-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված Ծագման հայտարարագիրը կարող է կազմվել ցանկացած արտադրողի կամ արտահանողի կողմից՝ ծագում ունեցող ապրանքների խմբաքանակի համար, որի

մաքսային արժեքը չի գերազանցում հինգ հազար (5000) եվրոն կամ ներմուծող Կողմի արժույթով համարժեք գումարը:

2. Ծագման հայտարարագիրն արտադրողի կամ արտահանողի կողմից կազմված ապրանքների ծագման մասին հայտարարություն է՝ ապրանքներին առնչվող ցանկացած առետրային փաստաթղթի վերաբերյալ: Ծագման հայտարարագիրը պետք է կազմված լինի մեքենագրելու, դրոշմելու կամ տպագրելու եղանակով եւ պետք է լինի անգլերեն:

3. Ծագման հայտարարագիր կազմող արտադրողը կամ արտահանողը պետք է պատրաստ լինի արտահանող Կողմի ստուգող մարմնի պահանջով ցանկացած ժամանակ ներկայացնելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք հաստատում են տվյալ ապրանքների ծագումը, ինչպես նաեւ սույն Կանոնների այլ պահանջների կատարումը:

4. Ծագման հայտարարագիրը ներառում է մեկ խմբաքանակի մեջ մտնող՝ ծագում ունեցող ապրանքները եւ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու նպատակներով վավեր է կազմման օրվանից 12 (տասներկու) ամիս: Հայտարարագրված ներմուծվող ապրանքների փաստացի քաշը չպետք է գերազանցի Ծագման հայտարարագիրը պարունակող առետրային փաստաթղթի մեջ նշված քաշի հինգ (5) տոկոսը:

5. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինները ողջամիտ կասկածներ ունեն Ծագման հայտարարագրի իսկության եւ (կամ) ծագման չափորոշիչներին ապրանքների համապատասխանության վերաբերյալ, նրանք կարող են պահանջել, որ Ծագման սերտիֆիկատ ներկայացվի:

Հոդված 22

Աննշան անհամապատասխանությունները

1. Եթե ապրանքների ծագումը կասկածների տեղիք չի տալիս, ծագման ապացույցի մասին տեղեկությունների եւ ներմուծող Կողմի մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերի միջեւ աննշան անհամապատասխանությունների

հայտնաբերումն ինքնին չպետք է հանգեցնի ծագման ապացույցի անվավեր ճանաչմանը, եթե այդ տեղեկությունները փաստացիորեն համապատասխանում են ներկայացված ապրանքներին:

2. Եթե ծագման միեւնույն ապացույցի համաձայն մի քանի ապրանքներ են հայտարարագրված, նշված ապրանքներից որեւէ մեկի հետ ծագած խնդիրը չպետք է ազդեցություն ունենա ծագման ապացույցի մեջ ներառված մնացած ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման վրա կամ որեւէ կերպ հետաձգի դա:

Հոդված 23

Փաստաթղթերի պահպանությանը ներկայացվող պահանջները

1. Ծագման սերտիֆիկատ ստանալու համար դիմած արտադրողը կամ արտահանողը պետք է պահպանի ամբողջ փաստաթղթաբանությունը եւ լիազորված մարմին ներկայացված փաստաթղթերի օրինակները՝ Ծագման սերտիֆիկատի տրման ամսաթվից սկսած՝ առնվազն 3 (երեք) տարի ժամկետով:

2. Ներմուծողը, որին տրամադրվել է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ, պետք է ծագման ապացույցի օրինակն իր մոտ պահի սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման ամսաթվից առնվազն 3 (երեք) տարի ժամկետով:

3. Ծագման սերտիֆիկատի դիմումը եւ դրա հետ կապված բոլոր փաստաթղթերը պահվում են լիազորված մարմնի մոտ՝ Ծագման սերտիֆիկատի տրման ամսաթվից սկսած՝ առնվազն 3 (երեք) տարի ժամկետով:

4. Ծագման հայտարարագիր կազմող արտադրողը կամ արտահանողը պետք է պահպանի տվյալ ապրանքների ծագումը հավաստող ամբողջ փաստաթղթաբանությունը եւ փաստաթղթերի օրինակները՝ Ծագման հայտարարագրի տրման ամսաթվից սկսած՝ առնվազն 3 (երեք) տարի ժամկետով:

ԲԱԺԻՆ III. ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՈՒՄՆԵՐԻ ՌԵԺԻՄԸ

Հոդված 24

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը

1. Սույն համաձայնագրով նախատեսված սակագնային առանձնաշնորհումների ռեժիմը կիրառվում է սույն Կանոնների պահանջները բավարարող՝ ծագում ունեցող ապրանքների նկատմամբ:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմիններն արտահանող Կողմի՝ ծագում ունեցող ապրանքների համար տրամադրում են սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ՝ պայմանով, որ՝

ա) ներմուծվող ապրանքները բավարարում են սույն Կանոնների 3-րդ հոդվածում նշված ծագման չափորոշիչները,

բ) սույն Կանոնների 15-րդ հոդվածում նշված՝ անմիջական փոխադրմանը ներկայացվող պահանջները կատարված են,

գ) ներմուծվող ապրանքների ծագումը հավաստվում է ծագման ապացույցով՝ սույն Կանոններում նախատեսված պահանջների համաձայն:

3. Եթե ներմուծման պահին անմիջական փոխադրման պահանջների մասով համապատասխան Ծագման ապացույց կամ փաստաթղթային ապացույց չի ներկայացվել, ապա ներմուծող Կողմը սահմանում է կիրառելի ԱԱԲԴ մաքսատուրք կամ պահանջում է ներմուծված ապրանքների մասով ապահովման վճարում, եթե կիրառելի է: Այս դեպքում ներմուծողը կարող է հայցել սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրում եւ ցանկացած ավել վճարված մաքսատուրքի փոխհատուցում կամ ապահովման վճարում՝ ներմուծող Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն մաքսային հայտարարագրի գրանցման պահից 12 (տասներկու) ամսվա ընթացքում՝ պայմանով, որ պահպանվեն սույն հոդվածի բոլոր պահանջները:

4. Չհակասելով սույն հոդվածի 2-րդ կետին՝ եթե ներմուծող Կողմի մաքսային մարմիններն ունեն ողջամիտ կասկածներ այն ապրանքների ծագման վերաբերյալ, որոնց համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ է հայցվում, եւ (կամ) ներկայացված ծագման ապացույցի իսկության վերաբերյալ, ապա տվյալ մաքսային մարմինները կարող են կասեցնել այդ ապրանքների համար սակագնային

առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու դիմումը մինչեւ ստուգման ընթացակարգերի արդյունքները ստանալը: Այդուհանդերձ, ապրանքները կարող են բաց թողնվել այդ Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների պահանջների համաձայն:

Հոդված 25

Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման մերժումը

1. Եթե ապրանքները չեն բավարարում սույն Կանոնների պահանջները, կամ եթե ներմուծողը կամ արտահանողը չի պահպանում սույն Կանոնների պահանջները, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինները մերժում են սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը եւ գանձում չվճարված մաքսատուրքերը՝ այդ Կողմի համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն:

2. Ներմուծող Կողմի մաքսային մարմինները մերժում են սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը հետեւյալ դեպքերից որեւէ մեկի պարագայում.

ա) ապրանքները չեն բավարարում սույն Կանոնների 3-րդ հոդվածում նշված ծագման չափորոշիչները.

բ) սույն Կանոնների 15-րդ հոդվածով նախատեսված՝ անմիջական փոխադրմանը ներկայացվող պահանջները կատարված չեն.

գ) Ծագման ապացույցը չի ներկայացվել ներմուծող Կողմի մաքսային մարմիններին կամ չի տրամադրվել եւ պատշաճ չի լրացվել, ինչպես սահմանված է սույն Կանոնների 1-ին հավելվածում.

դ) Ծագման ապացույցում նշված ապրանքները չեն կարող նույնականացվել մաքսային հայտարարագրման պահին հայտարարագրված ապրանքների հետ: Այնուամենայնիվ, Ծագման ապացույցում նշված ՆՀ ծածկագրի եւ ներմուծող Կողմի մաքսային մարմնի փաստացի դասակարգման միջեւ համապատասխանության բացակայությունն ինքնին պատճառ չէ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի մերժման համար.

ե) հայտարարագրված ներմուծվող ապրանքների իրական քաշը գերազանցում է Ծագման ապացույցում նշված քաշը՝ հինգ (5) տոկոսից ավելի չափով.

զ) Ծագման սերտիֆիկատը չի ներկայացվել ներմուծող Կողմի մաքսային մարմնի պահանջով՝ սույն Կանոնների 21-րդ հոդվածի 5-րդ կետով եւ 28-րդ հոդվածի 5-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.

է) Ծագման սերտիֆիկատի բնօրինակում, դրա օրինակում կամ էլեկտրոնային Ծագման սերտիֆիկատում ներառված տեղեկությունները սույն Կանոնների 28-րդ հոդվածում նշված՝ համացանցային տվյալների բազայում պարունակվող տեղեկություններին չեն համապատասխանում մաքսային հայտարարագրի գրանցման ամսաթվի դրությամբ.

ը) սույն Կանոնների 29-րդ եւ 30 հոդվածների համաձայն ձեռնարկված ստուգման ընթացակարգերով չի որոշվում ապրանքների ծագումը, կամ դրանց միջոցով չի մատնանշվում ծագման չափորոշիչների անհամապատասխանությունը.

թ) արտահանող Կողմի ստուգող մարմինը հաստատել է, որ Ծագման սերտիֆիկատը չի տրվել (այսինքն՝ կեղծված է) կամ չեղարկվել է (հետ է կանչվել).

ժ) ներմուծող Կողմի մաքսային մարմիններն արտահանող Կողմի ստուգող մարմնին ստուգման պահանջով դիմելու ամսաթվից հետո առավելագույնը 4 (չորս) ամսվա ընթացքում որեւէ պատասխան չեն ստանում, կամ եթե ստուգման պահանջի վերաբերյալ տրված պատասխանը չի պարունակում բավարար տեղեկություններ, որոնք թույլ կտան եզրակացնել ապրանքների՝ Կողմի ծագում ունենալու վերաբերյալ.

ժա) ներմուծող Կողմի մաքսային մարմինը սույն կանոնների 30-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված՝ ստուգման նպատակով կատարվող այցի հարցումը ներկայացնելու օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում չի ստանում գրավոր համաձայնություն արտահանող Կողմի ստուգող մարմնից՝ սույն կանոնների 30-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան, կամ ստանում է ստուգման նպատակով կատարվող այդպիսի այցի մերժում:

ԲԱԺԻՆ IV. ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 26

Լիազորված մարմինը եւ ստուգող մարմինը

Կողմերի կառավարություններից յուրաքանչյուրը նշանակում կամ պահում է լիազորված մարմին եւ ստուգող մարմին:

Հոդված 27

Ծանուցումները

1. Նախքան սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելը յուրաքանչյուր Կողմ համապատասխանաբար Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Մոնղոլիայի լիազորված մարմնի միջոցով մյուս Կողմին է տրամադրում հետեւյալ տեղեկությունները.

ա) Կողմերի յուրաքանչյուր լիազորված մարմնի եւ ստուգող մարմնի անվանումներն ու հասցեները.

բ) Կողմերի լիազորված մարմինների կնիքների բնօրինակ եւ ընթեռնելի նմուշային դրոշմվածքները.

գ) Կողմերի մաքսային մարմինների եւ ստուգող մարմինների կոնտակտային էլեկտրոնային հասցեները՝ ստուգման ընթացակարգերի դյուրացման նպատակով.

դ) սույն Կանոնների 28-րդ հոդվածում նշված համացանցային տվյալների բազաների էլեկտրոնային հասցեները եւ այդ համացանցային տվյալների բազաների հասանելիության մասով պահանջների վերաբերյալ տեղեկությունները (օգտատերերի անվանումներ, գաղտնաբառեր՝ առկայության դեպքում):

2. Մոնղոլիան սույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված բնօրինակ տեղեկություններն ու այդ տեղեկություններում կատարվող ցանկացած փոփոխություն Եվրասիական տնտեսական հանձնաժողովին է տրամադրում վեց օրինակից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը Մոնղոլիային կարող է դիմել այդ տեղեկությունների լրացուցիչ օրինակներ տրամադրելու համար:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը եւ Մոնղոլիայի իրավասու մարմինը համացանցում հրապարակում են յուրաքանչյուր Կողմի լիազորված մարմինների եւ ստուգող մարմնի անվանումների եւ հասցեների վերաբերյալ տեղեկությունները:

4. Սույն հոդվածում սահմանված տեղեկությունների որեւէ փոփոխության վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը եւ Մոնղոլիայի իրավասու մարմինը ծանուցվում են նախօրոք եւ միեւնոյն կարգով:

5. Սույն Կանոններին համապատասխան Կողմերի միջեւ ցանկացած ծանուցում կամ հաղորդակցություն իրականացվում է համապատասխան մարմինների միջոցով՝ անգլերենով:

Հոդված 28

Համացանցային տվյալների բազաների օգտագործումը:

Ծագման վերաբերյալ տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգի մշակումը եւ կիրառումը

1. Սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման ընթացակարգերը դյուրացնելու համար Կողմերը կարող են օգտվել լիազորված մարմինների պաշտպանված տվյալների բազաներից, որոնք պարունակում են տրված Ծագման սերտիֆիկատների վերաբերյալ տեղեկություններ եւ ներմուծող Կողմի մաքսային մարմիններին թույլ են տալիս ստուգել տրամադրված ցանկացած Ծագման սերտիֆիկատի իսկությունը (այսուհետ՝ համացանցային տվյալների բազաներ):

2. Համացանցային տվյալների բազաները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները.

ա) պարունակվող տեղեկությունների ամբողջականություն, վերաբերելիություն եւ հուսալիություն.

բ) պարունակվող տեղեկությունների պաշտպանություն՝ չթույլատրված մուտքից, ոչնչացումից, ձեւափոխումից կամ ցանկացած այլ անօրինական գործողությունից.

գ) պատշաճ շուրջօրյա գործառույթուն.

դ) Ծագման սերտիֆիկատում առկա տվյալների (բացառությամբ ստորագրությունների եւ կնիքների) հետ նույնական տեղեկությունների մուտքագրում համացանցային տվյալների բազայում՝ դրա տրամադրման օրվանից ոչ ուշ, քան մեկ (1) օրվա ընթացքում.

ե) տրված Ծագման սերտիֆիկատների մասին տեղեկությունների պահպանում՝ սույն Կանոնների 23-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետի ընթացքում, եւ

զ) համացանցային տվյալների բազայում պարունակվող տեղեկությունները ներմուծող Կողմի մաքսային մարմինների կողմից պահպանելու (տպելու) հնարավորություն:

3. Շահագրգիռ լիազորված մարմինների կողմից համացանցային տվյալների բազաների ներդրման կամ սույն հոդվածի 6-րդ կետում նշված Ծագման վերաբերյալ տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ ԾՏՓԷՀ) կիրառման դեպքում Ծագման սերտիֆիկատները կարող են տրվել էլեկտրոնային տարբերակով՝ առանց թղթային տարբերակով բնօրինակ կազմելու (այսուհետ՝ էլեկտրոնային Ծագման սերտիֆիկատ):

4. Եթե Կողմերն օգտվում են համացանցային տվյալների բազաներից, ներմուծող Կողմի մաքսային մարմինը Ծագման սերտիֆիկատի բնօրինակ չի պահանջում: Այս դեպքում Ծագման սերտիֆիկատի օրինակը (թղթային կամ էլեկտրոնային տարբերակը) կամ էլեկտրոնային Ծագման սերտիֆիկատը բավարար է սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ տրամադրելու համար:

5. Եթե Ծագման սերտիֆիկատի մասին տեղեկությունները համացանցային տվյալների բազայում հասանելի չեն մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինը պահանջում է ներկայացնել Ծագման սերտիֆիկատի բնօրինակը, եթե միայն Ծագման սերտիֆիկատը չի տրվում էլեկտրոնային ձեւաչափով, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 3-րդ կետում:

6. Ոչ թղթային առետրի հետագա զարգացման համար Կողմերը պետք է ձգտեն կիրառել եւ ապահովել էլեկտրոնային տվյալների փոխանակման հայեցակարգի

վրա հիմնված ԾՏՓԷՀ:

7. ԾՏՓԷՀ-ը ներմուծող Կողմի մաքսային մարմինների համար նախատեսում է արտահանող Կողմի լիազորված մարմինների կողմից տրված Ծագման սերտիֆիկատների տեղեկություններն էլեկտրոնային տվյալների փոխանցման միջոցով ստանալու հնարավորություն:

8. Եթե Կողմերը կիրառում են ԾՏՓԷՀ-ը, ներմուծող Կողմի մաքսային մարմինը Ծագման սերտիֆիկատի բնօրինակ, դրա օրինակ կամ էլեկտրոնային Ծագման սերտիֆիկատ չի պահանջում: Այս դեպքում այդ Ծագման սերտիֆիկատի ամսաթիվը եւ համարը պետք է նշվեն մաքսային հայտարարագրում՝ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրման համար:

9. Եթե Ծագման սերտիֆիկատի մասին տեղեկությունները ԾՏՓԷՀ-ում հասանելի չեն մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ, ապա ներմուծող Կողմի մաքսային մարմինը պահանջում է ներկայացնել Ծագման սերտիֆիկատի օրինակը եւ ստուգում է դրա իսկությունը՝ օգտվելով համացանցային տվյալների բազայից: Եթե լիազորված մարմինը համացանցային տվյալների բազա չունի, ապա ներկայացվում է Ծագման սերտիֆիկատի բնօրինակը, եթե Ծագման սերտիֆիկատը չի տրվում միայն էլեկտրոնային ձեւաչափով, ինչպես նախատեսված է սույն հոդվածի 3-րդ կետում:

10. ԾՏՓԷՀ-ի կիրառմանը ներկայացվող բոլոր պահանջները եւ պայմանները պետք է սահմանվեն առանձին արձանագրությամբ:

Հոդված 29

Ծագման ստուգումը

1. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմինները ողջամիտ կասկածներ ունեն ծագման ապացույցի իսկության եւ (կամ) ծագման չափորոշիչներին ծագման ապացույցի մեջ ներառված ապրանքների համապատասխանության վերաբերյալ՝ սույն Կանոնների 3-րդ հոդվածի համաձայն, կամ ընտրանքային ստուգման դեպքում նրանք կարող են արտահանող Կողմի ստուգող մարմին ուղարկել հարցում՝ ծագման

ապացույցի իսկությունը եւ (կամ) ծագման չափորոշիչներին ապրանքների համապատասխանությունը հաստատելու եւ (կամ) պահանջի դեպքում՝ ապրանքներն արտադրողի կամ արտահանողի կողմից փաստաթղթային ապացույց տրամադրելու համար (այսուհետ՝ ստուգման վերաբերյալ հարցում):

2. Սույն Կանոնների 25-րդ հոդվածի 2-րդ կետի «բ»-«է» ենթակետերով նախատեսված դեպքերում ներմուծող Կողմի մաքսային մարմիններից չի պահանջվում ստուգման պահանջով դիմել ստուգող մարմնին կամ լիազորված մարմնին՝ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը մերժելու վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

3. Ստուգման բոլոր պահանջներին կցվում են տվյալ ապրանքները նույնականացնելու համար բավարար տեղեկություններ, ծագման ապացույցի ստուգված օրինակը, եւ դրանում նշվում են այդ պահանջը ներկայացնելու հանգամանքներն ու պատճառները:

4. Ստուգման պահանջ ստացողը ներմուծող Կողմի՝ պահանջ ներկայացրած մաքսային մարմնին պատասխանում է ստուգման պահանջի ստացման ամսաթվից հետո՝ 4 (չորս) ամսվա ընթացքում:

5. Ստուգման պահանջի օրինակը եւ դրան կցված փաստաթղթերը, ինչպես նաեւ այդ պահանջին տրված ստուգման պատասխանը ներմուծող Կողմի մաքսային մարմնի եւ արտահանող Կողմի ստուգող մարմնի կամ լիազորված մարմնի միջեւ փոխանցվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն Կանոնների 27-րդ հոդվածի 1-ին կետում նշված կոնտակտային էլեկտրոնային հասցեների միջոցով:

6. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան պահանջին ի պատասխան՝ արտահանող Կողմի ստուգող մարմինը պետք է հստակորեն նշի, թե արդյոք ծագման ապացույցն իսկական է, եւ (կամ) արդյոք ապրանքները կարող են համարվել այդ Կողմի ծագում ունեցող, այդ թվում՝ ապրանքների արտադրողից կամ արտահանողից ստացված անհրաժեշտ փաստաթղթային ապացույցները տրամադրելու միջոցով: Նախքան ստուգման պահանջի պատասխանը ստանալը կարող է կիրառվել սույն Կանոնների 24-րդ հոդվածի 4-րդ կետը: Վճարված մաքսատուրքերը կամ ապահովման վճարները փոխհատուցվում են, եթե ստուգման ընթացակարգերի ստացված

արդյունքներով հաստատվում եւ հստակ նշվում է, որ ապրանքները որակվել են որպէս ծագում ունեցող, եւ որ սույն Կանոնների մյուս բոլոր պահանջները բավարարվել են:

Հոդված 30

Ստուգայցը

1. Եթե ներմուծող Կողմի մաքսային մարմիններին չի բավարարում սույն Կանոնների 29-րդ հոդվածում նշված ստուգման արդյունքը, ապա նրանք բացառիկ հանգամանքներում կարող են դիմել արտահանող Կողմին՝ սույն Կանոնների 23-րդ հոդվածում նշված փաստաթղթավարությունը վերանայելու եւ (կամ) ապրանքների արտադրության արտադրական պայմանները զննելու նպատակով ստուգայցեր անցկացնելու պահանջով:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն ստուգայց կատարելու նպատակով ներմուծող Կողմի մաքսային մարմինն արտահանող կողմի ստուգող մարմին ստուգայց կատարելու իր մտադրության մասին գրավոր պահանջ (այսուհետ՝ ստուգայցի պահանջ) է ներկայացնում:

Ստուգայցի պահանջի օրինակը նույնպէս ներմուծող Կողմի մաքսային մարմնից փոխանցվում է արտահանող Կողմի ստուգող մարմնին էլեկտրոնային եղանակով՝ սույն Կանոնների 27-րդ հոդվածի 1-ին կետում նշված կոնտակտային էլեկտրոնային հասցեների միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված ստուգայցի պահանջը պետք է լինի հնարավորինս ընդգրկուն եւ ի թիվս այլնի ներառի՝

- ա) Կողմի՝ պահանջը տրամադրած մաքսային մարմնի անվանումը,
- բ) ապրանքներ արտադրողի կամ արտահանողի անվանումները, որի տարածք այց է կատարվելու,
- գ) ստուգայցի առաջարկվող ամսաթիվը,
- դ) առաջարկվող ստուգայցի շրջանակը, այդ թվում՝ նշում՝ ստուգման ենթակա ապրանքների եւ դրանց ծագման վերաբերյալ կասկածների մասին, եւ

ե) ստուգայցն իրականացնող իրավասու մարմինների վերաբերյալ նախնական տեղեկություններ:

4. Արտահանող Կողմի ստուգող մարմինը պահանջը պետք է ուղարկի այն ապրանքներ արտադրողին կամ արտահանողին, որի տարածք այց է կատարվելու, եւ ստուգայցի պահանջն ուղարկվելու ամսաթվից հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում գրավոր համաձայնությունը փոխանցի պահանջով դիմած Կողմին:

5. Եթե ստուգման պահանջն ուղարկվելու ամսաթվից հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում ստուգող մարմնից չի ստացվում գրավոր համաձայնություն, կամ ստացվում է այդպիսի ստուգայց կատարելու մերժում, ապա պահանջով դիմած Կողմը մերժում է Ծագման ապացույցում (ապացույցներում) նշված՝ ստուգայցի միջոցով ստուգման ենթակա ապրանքների համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը:

6. Ցանկացած ստուգայց կատարվում է գրավոր համաձայնությունն ստանալու ամսաթվից սկսած՝ 60 (վաթսուն) օրվա ընթացքում եւ ավարտվում ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան գրավոր համաձայնությունն ստանալու ամսաթվից սկսած՝ 150 (հարյուր հիսուն) օր հետո:

7. Ստուգայցը կատարվում է ներմուծող եւ արտահանող Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված Ստուգող խմբի կողմից:

8. Արտահանող եւ ներմուծող Կողմերի իրավասու մարմինները Ստուգող խմբի կողմից կատարվող ստուգայցի կատարման նպատակով արդյունավետ համագործակցություն են ապահովում:

9. Ստուգայցին համաձայնություն տված ապրանքներ արտադրողը կամ արտահանողը պետք է աջակցի դրա իրականացմանը, ապահովի ստուգման առարկա հանդիսացող տարածք մուտք գործելու, ֆինանսական (հաշվապահական) եւ արտադրական փաստաթղթերից օգտվելու հնարավորություն եւ պահանջի դեպքում տրամադրի ցանկացած լրացուցիչ տեղեկություն եւ (կամ) փաստաթուղթ:

10. Եթե ստուգայցի ընթացքում ստուգվող Կողմի մարմինների կամ կազմակերպությունների կողմից ստեղծվում են խոչընդոտներ, որոնց հետեւանքով

անհնարին է դառնում ստուգայցի անցկացումը, ապա ներմուծող Կողմն իրավասու է մերժելու տվյալ ապրանքի համար սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը:

11. Ստուգայցի արդյունքները փաստաթղթավորվում են անգլերենով՝ հաշվետվության տեսքով, որում հստակորեն մատնանշվում է սույն Կանոններով սահմանված պահանջներին ստուգված ապրանքների համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը:

12. Արտահանող Կողմի ստուգող մարմինը ստուգված ապրանքներ արտադրողին կամ արտահանողին է ուղարկում այդպիսի ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ոչ ուշ, քան ստուգայցն ավարտելու ամսաթվից 20 (քսան) օր հետո:

13. Ցանկացած կասեցված կամ մերժված սակագնային առանձնաշնորհումների ռեժիմ պետք է վերականգնվի ստուգայցի հիման վրա՝ նշելով, որ ստուգայցի ենթակա ապրանքները համապատասխանում են սույն Կանոններով սահմանված պահանջներին:

14. Ներմուծող Կողմի ներկայացուցիչների՝ ստուգայցին մասնակցելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է ներմուծող Կողմը:

Հոդված 31

Գաղտնիությունը

Սույն Կանոններին համապատասխան տրամադրված բոլոր տեղեկությունները Կողմերը պետք է համարեն գաղտնի՝ իրենց համապատասխան օրենքների եւ կարգավորումների համաձայն: Այդ տեղեկությունները չպետք է բացահայտվեն առանց այդ տեղեկությունները տրամադրող անձի կամ Կողմի մարմնի թույլտվության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կարող է անհրաժեշտ լինել դրանց բացահայտումը՝ դատական գործընթացների նպատակներից ելնելով:

Հոդված 32

Խարդախության համար պատասխանատվության միջոցները

Կամ այլ միջոցներ

Յուրաքանչյուր Կողմ քրեական կամ վարչական պատասխանատվության միջոց է նախատեսում սույն Կանոնների հետ կապված իր համապատասխան օրենքների եւ կարգավորումների խախտման համար:

ԲԱԺԻՆ Վ. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33

Փոխադրման կամ պահման գործընթացում գտնվող ապրանքները

Սակագնային առանձնաշնորհումների դեմ է տրամադրվում ծագում ունեցող այն ապրանքների համար, որոնք մինչեւ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելը 6 (վեց) ամիսը չգերազանցող ժամկետով գտնվում են արտահանող Կողմից ներմուծող Կողմ փոխադրման կամ ներմուծող Կողմի մաքսային հսկողության շրջանակներում ժամանակավոր պահման մեջ, եթե դրանք ներմուծող Կողմ են ներմուծվում կամ հայտարարագրվում են ներմուծող Կողմի մաքսային մարմնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո՝ պայմանով, որ պահպանվել են սույն Կանոնների 24-րդ հոդվածի բոլոր պահանջները կատարվել են:

ԾԱԳՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ

ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ

1. Արտահանողը (առեւտրային անվանումը, հասցեն եւ երկիրը)			4. Թիվ _____ ԵԱՏՄ-ՄՈՆԴՈԼԻԱ Ժամանակավոր առեւտրային համաձայնագիր Ծագման սերտիֆիկատ Ձեւ ԵԱՄ Տրված է՝ _____ (երկիր) Ներկայացնելու համար՝ _____ (երկիր)		
2. Ներմուծողը/Ստացողը (առեւտրային անվանումը, հասցեն եւ երկիրը)					
3. Տրանսպորտային միջոցը եւ երթուղին (որքանով հայտնի է)			5. Ծառայողական օգտագործման համար		
6. Համարը՝ ը/կ	7. Փաթեթվածքների թիվը եւ տեսակը	8. Ապրանքների նկարագրությունը	9. Ծագման չափորոշիչը	10. Ապրանքների քանակը	11. Հաշիվ- ապրանքագրի համարը եւ ամսաթիվը
12. Հավաստում Իրականացված հսկողության հիման վրա սույնով հավաստվում է, որ դիմումատուի հայտարարագիրը համապատասխանում է իրականությանը Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը			13. Դիմումատուի հայտարարագիր Սույնով ներքոստորագրյալը հայտարարում է, որ վերոնշյալ տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, որ բոլոր ապրանքներն արտադրվել են _____ (երկիր) եւ դրանք համապատասխանում են ԵԱՏՄ-Մոնդոլիա Ժամանակավոր առեւտրային համաձայնագրի 3-րդ հավելվածով (Ծագման կանոնները) նախատեսված ծագման կանոններին Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը		

Ծագման սերտիֆիկատի (Ձեռնագիր) լրացուցիչ թերթ թիվ _____					
6. Համարը՝ ը/կ	7. Փաթեթվածքների թիվը եւ տեսակը	8. Ապրանքների նկարագրությունը	9. Ծագման չափորոշիչը	10. Ապրանքների քանակը	11. Հաշիվ- ապրանքագրի համարը եւ ամսաթիվը
12. Հավաստում Իրականացված հսկողության հիման վրա սույնով հավաստվում է, որ դիմումատուի հայտարարագիրը համապատասխանում է իրականությանը Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը			13. Դիմումատուի հայտարարագիր Սույնով ներքոստորագրյալը հայտարարում է, որ վերոնշյալ տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, որ բոլոր ապրանքներն արտադրվել են _____ (երկիր) եւ դրանք համապատասխանում են ԵԱՏՄ- Մոնդոլիա Ժամանակավոր առևտրային համաձայնագրի 3-րդ հավելվածով (Ծագման կանոններ) նախատեսված ծագման կանոններին Վայրը Ամսաթիվը Ստորագրությունը Կնիքը		

Ծագման սերտիֆիկատը (Ձեւ ԵԱՄ) լրացնելու ցուցումներ

Ծագման սերտիֆիկատը (Ձեւ ԵԱՄ) եւ դրա լրացուցիչ թերթերը, որոնք օգտագործվում են այն դեպքում, երբ ապրանքների վերաբերյալ տեղեկությունները հնարավոր չէ նշել մեկ էջում, պետք է ձեւակերպվեն ԻՍՕ Ա4 չափսի գունավոր թղթի վրա՝ սույն հավելվածում ներկայացված նմուշին համապատասխան:

Վեցից տասնմեկերորդ վանդակներում չօգտագործված դատարկ հատվածների վրա գիծ է քաշվում՝ որեւէ լրացուցիչ տեղեկություն ավելացնելու կանխման նպատակով: Ծագման սերտիֆիկատը տրամադրվում է միայն էլեկտրոնային ձեւաչափով՝ սույն համաձայնագրի 3-րդ հավելվածի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգով:

Ծագման սերտիֆիկատը պետք է՝

ա) կազմվի սույն հավելվածով սահմանված ձեւանմուշին համապատասխան.

բ) լրացվի անգլերեն.

գ) պարունակի նվազագույն տվյալները, որոնք անհրաժեշտ է լրացնել 1-ին, 2-րդ, 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ վանդակներում:

Ծագման սերտիֆիկատը կարող է պարունակել նաեւ լրացուցիչ տվյալներ, այդ թվում՝ տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան շահագրգիռ անձին ստուգելու դրանք սույն Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 28-րդ հոդվածում նշված տվյալների բազայի միջոցով (ինչպիսիք են URL հղումը, QR ծածկագիրը եւ այլն):

Վանդակ 1. Նշե՛ք ապրանքներն արտահանողի մասին տեղեկությունները՝ առետրային անվանումը, հասցեն եւ երկիրը:

Վանդակ 2. Նշե՛ք ապրանքները ներմուծողի (պարտադիր) եւ ստացողի (եթե հայտնի են) մասին տեղեկությունները՝ առետրային անվանումը, հասցեն եւ երկիրը:

Վանդակ 3. Նշե՛ք տրանսպորտային փոխադրման մասին տեղեկությունները (որքանով հայտնի են), ինչպես օրինակ՝ մեկնման (առաքման) ամսաթիվը, տրանսպորտային միջոցը (նավ, օդանավ եւ այլն), բեռնաթափման վայրը (նավահանգիստ, օդանավակայան):

Վանդակ 4. Նշե՛ք հղման հատուկ համարի մասին տեղեկությունները, սերտիֆիկատը տրամադրող երկիրը եւ այն երկիրը, որին ներկայացվելու է սերտիֆիկատը:

Վանդակ 5. Նշե՛ք հետեւյալ բառերը.

«__ ԱՄՍԱԹՎՈՎ _ ԹԻՎ _____ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ»՝ Ծագման սերտիֆիկատի բնօրինակի կրկնօրինակ տրամադրելու դեպքում.

«ՏՐՎԱԾ Է _____ ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ __ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՓՈԽԱՐԵՆ»՝ Ծագման սերտիֆիկատը փոխարինելու դեպքում.

«ՏՐՎԱԾ Է _____ ԱՄՍԱԹՎՈՎ ԹԻՎ __ԾԱԳՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ(ՆԵՐ)Ի ՀԻՄԱՆ ՎՐԱ»՝ Կողմերի միջեւ ծագում ունեցող՝ մշակման կամ վերամշակման չենթարկված ապրանքների փոխադրման դեպքում.

«ՏՐՎԱԾ Է ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺՈՎ» կամ «ՏՐՎԱԾ Է ՀԵՏԻՆ ԱՄՍԱԹՎՈՎ»՝ արտահանումից հետո Ծագման սերտիֆիկատ տրամադրելու դեպքում:

Վանդակ 6. Նշե՛ք ապրանքի համարը՝ ըստ կարգի:

Վանդակ 7. Նշե՛ք փաթեթվածքների թիվը եւ տեսակը:

Վանդակ 8. Նշե՛ք ապրանքների մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝ ՆՀ-ի վեցանիշ ծածկագիրը եւ անհրաժեշտության դեպքում՝ մոդելն ու առետրային նշանն այնպես, որ հնարավոր լինի դրանք նույնականացնել: Եթե Ծագման սերտիֆիկատում ներառված ապրանքները ունեն տարբեր Կողմերի ծագում, ապա պետք է նշվի յուրաքանչյուր ապրանքի ծագումը (Հայաստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Ղրղզստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն կամ Մոնղոլիա):

Վանդակ 9. Բոլոր ապրանքների համար նշե՛ք ծագման չափորոշիչները՝ հետեւյալ աղյուսակում ներկայացված ձեւով.

Ծագման չափորոշիչը	Ներառե՛ք 9-րդ վանդակում
Ապրանքներն ամբողջությամբ ստացվել կամ արտադրվել են Կողմի տարածքում՝ սույն համաձայնագրի 3-րդ հավելվածի 4-րդ հոդվածով	ԱՍ

նախատեսված կարգով	
Ապրանքներն արտադրվել են տվյալ Կողմում բացառապես մեկ կամ ավելի Կողմերի ծագում ունեցող նյութերից	ԱԲ
Ապրանքներն արտադրվել են տվյալ Կողմում՝ ծագում չունեցող նյութերի օգտագործմամբ՝ պայմանով, որ այդ նյութերի արժեքը չգերազանցի ապրանքների FCA արժեքի հիսուն (50) տոկոսը	ԾՁՆ
Ապրանքներն արտադրվել են տվյալ Կողմում՝ ծագում չունեցող նյութերի օգտագործմամբ՝ պայմանով, որ այդ նյութերն առնվազն ենթարկվեն Ներդաշնակեցված համակարգի սակագնային ապրանքային դիրքի փոփոխության	ՓԱԴ

Վանդակ 10. Նշե՛ք ապրանքների քանակը՝ համաքաշը (կգ) կամ չափման այլ միավորներ (հատ, լիտր եւ այլն):

Վանդակ 11. Նշե՛ք հաշիվ-ապրանքագրի համարը (համարները) եւ հաշիվ-ապրանքագրի (հաշիվ-ապրանքագրերի) ամսաթիվը (ամսաթվերը), որոնք լիազորված մարմին են ներկայացվել Ծագման սերտիֆիկատի տրամադրման համար:

Այն դեպքում, երբ հաշիվ-ապրանքագրերը տրամադրվում են կողմ չհանդիսացող երկրի կողմից, ապա նշվում է «ԵԵՆ» բառը հետեւյալ տեղեկությունների հետ միասին.

ա) հաշիվ-ապրանքագրի համարը (համարները) եւ ամսաթիվը (ամսաթվերը) (Ծագման սերտիֆիկատի տրամադրման պահին այդ տեղեկությունները հասանելի լինելու դեպքում), կամ

բ) կողմ չհանդիսացող երկրի եւ (կամ) այն անձի անունը, որը պետք է տրամադրի հաշիվ-ապրանքագիրը:

Այնուամենայնիվ, եթե ապրանքների ծագումը կասկածի տակ չի առնվում, ապա սույն վանդակով նախատեսված՝ «ԵԵՆ»-ին վերաբերող տեղեկությունների բացակայությունն ինքնին պատճառ չէ սակագնային առանձնաշնորհումների ռեժիմի տրամադրումը մերժելու համար:

Վանդակ 12. Նշե՛ք Ծագման սերտիֆիկատի տրամադրման վայրը եւ ամսաթիվը, ստորագրելու իրավասություն ունեցող անձի ստորագրությունը եւ լիազորված մարմնի կնիքը: Այնուամենայնիվ, ստորագրելու իրավասություն ունեցող անձի ստորագրությունը եւ լիազորված մարմնի կնիքը կարող է չնշվել սույն վանդակում, եթե Ծագման սերտիֆիկատը տրամադրվում է միայն էլեկտրոնային ձեւաչափով՝ սույն

համաձայնագրի 3-րդ հավելվածի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգով:

Վանդակ 13. Նշե՛ք ապրանքների ծագումը (Հայաստանի Հանրապետություն, Բելառուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն, Ղրղզստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն կամ Մոնղոլիա), հայտարարագրման վայրը եւ ամսաթիվը, դիմումատուի ստորագրությունը եւ կնիքը: Այնուամենայնիվ, դիմումատուի ստորագրությունը եւ կնիքը կարող է չնշվել այս վանդակում, եթե Ծագման սերտիֆիկատը տրամադրվում է միայն էլեկտրոնային ձեւաչափով՝ սույն համաձայնագրի 3-րդ հավելվածի 28-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգով: Ծագման սերտիֆիկատում ներառված՝ տարբեր կողմերում ծագող ապրանքների դեպքում պետք է նշել «Տե՛ս 8-րդ վանդակը» բառերը:

Ծագման սերտիֆիկատի (Ձեւ ԵԱՄ) նպատակներով «ԵԱՏՄ - Մոնղոլիա Ժամանակավոր առեւտրային համաձայնագիր» նշանակում է «Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջեւ ժամանակավոր առեւտրային համաձայնագիր»:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 1

Նպատակները

Սույն հավելվածի նպատակն է սույն համաձայնագրի շրջանակներում ծագող վեճերի լուծման համար ապահովել արդյունավետ, գործունե և թափանցիկ մեխանիզմ՝ հնարավորության դեպքում փոխհամաձայնությամբ լուծման հասնելու համար:

Հոդված 2

Սահմանումները

Սույն հավելվածի նպատակներով՝

ա) **«Արբիտրաժային կոլեգիա»**՝ նշանակում է սույն հավելվածի 8-րդ հոդվածի համաձայն ստեղծված Արբիտրաժային կոլեգիա.

բ) **«վեճի կողմեր»**՝ նշանակում է բոլոր ներկայացնող կողմ և կողմ, որի դեմ ներկայացվել է բողոքը: Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները և Եվրասիական տնտեսական միությունը կարող են հանդես գալ որպես վեճի կողմ համատեղ կամ առանձին: Առանձին հանդես գալու դեպքում, եթե միջոցը ձեռնարկվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կողմից, ապա վեճի կողմ համարվում է Եվրասիական տնտեսական միության այդ անդամ պետությունը, իսկ եթե միջոցը ձեռնարկվում է Եվրասիական տնտեսական միության կողմից, ապա նա էլ վեճի կողմ է համարվում.

գ) **«բողոք ներկայացնող կողմ»**՝ նշանակում է բողոք բերող կողմ.

դ) **«կողմ, որի դեմ ներկայացվել է բողոքը»**՝ նշանակում է կողմ, որի դեմ բերվել է բողոքը.

ե) **«արբիտր»**՝ նշանակում է սույն հավելվածի 8-րդ հոդվածով սահմանված կարգով ձեւավորված Արբիտրաժային կոլեգիայի անդամ.

զ) **«նախագահող»**՝ նշանակում է արբիտր, որը հանդես է գալիս որպես

Արբիտրաժային կոլեգիայի նախագահող.

է) «**օգնական**»՝ նշանակում է անձ, որն արբիտրի նշանակման պայմանների շրջանակում իրականացնում է հետազոտություններ կամ տրամադրում աջակցություն արբիտրին.

ը) «**օրեր**»՝ նշանակում է օրացուցային օրեր, այդ թվում՝ հանգստյան եւ ոչ աշխատանքային օրերը:

Հոդված 3

Կիրառման շրջանակը

Սույն հավելվածի դրույթները, եթե սույն համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, կիրառվում են սույն համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման արդյունքում Կողմերի միջեւ ծագող բոլոր վեճերի առնչությամբ, բոլոր այն դեպքերում, երբ մի Կողմը համարում է, որ մյուս Կողմի կողմից կիրառվող միջոցը չի համապատասխանում սույն համաձայնագրով սահմանված պարտավորություններին, կամ եթե մյուս Կողմը չի կատարել սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները:

Հոդված 4

Տեղեկությունների փոխանակումը

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների եւ Եվրասիական տնտեսական միության միջեւ սույն համաձայնագրի առնչությամբ ծագող ցանկացած վեճի վերաբերող բոլոր ընթացակարգային փաստաթղթերի տարածումը չի դիտվում որպես սույն համաձայնագրով եւ (կամ) ԱՀԿ-ի համաձայնագրով նախատեսված գաղտնիության դրույթների խախտում:

Հոդված 5

Խորհրդակցությունները

1. Վեճի կողմերը փոխհամաձայնեցված լուծման հանգելու նպատակով ձեռնարկում են բոլոր հնարավոր քայլերը՝ սույն հավելվածի 3-րդ հոդվածում նշված ցանկացած հարցի վերաբերյալ որեւէ վեճ խորհրդակցությունների միջոցով

կարգավորելու համար:

2. Խորհրդակցություններ անցկացնելու մասին հարցումը սույն համաձայնագրի 27 հոդվածին (Համակարգողները) համապատասխան նշանակված համակարգողի միջոցով գրավոր ներկայացվում է Կողմին, որի դեմ ներկայացվել է բողոքը, եւ պարունակում է տեղեկություններ՝ հարցումը ներկայացնելու պատճառների, այդ թվում՝ քննության առարկա հանդիսացող ցանկացած միջոցների կամ այլ հարցերի եւ բողոքի իրավական հիմքերի մասին: Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ հարցումի ներկայացման մասին:

3. Եթե խորհրդակցություններ անցկացնելու մասին հարցումը ներկայացվել է սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, ապա այն Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, այն ստանալու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում անհապաղ գրավոր պատասխանում է հարցմանը եւ փոխհամաձայնեցված լուծման հասնելու նպատակով բարեխղճորեն խորհրդակցություն է անցկացնում բողոք ներկայացնող կողմի հետ՝ այն ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

4. Հրատապ հարցերի վերաբերյալ խորհրդակցությունները, այդ թվում՝ այն խորհրդակցությունները, որոնք վերաբերում են արագ փչացող ապրանքներին, անցկացվում են հարցումն ստանալու օրվանից հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

5. Սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերով սահմանված ժամկետները կարող են փոփոխվել վեճի կողմերի համաձայնությամբ:

6. Խորհրդակցությունների ընթացքում վեճի յուրաքանչյուր կողմ բավարար փաստացի տեղեկություններ է տրամադրում, որպեսզի հնարավոր լինի լիովին ուսումնասիրել այն, թե ինչպես կարող է գործող կամ առաջարկվող միջոցն ազդել սույն համաձայնագրի գործողության եւ կիրառության վրա:

7. Խորհրդակցությունները եւ մասնավորապես՝ վեճի կողմերի կողմից բացահայտված բոլոր տեղեկությունները եւ վարույթի ընթացքում Կողմերի դիրքորոշումները պետք է լինեն գաղտնի եւ չպետք է սահմանափակեն վեճի կողմերից որեւէ մեկի իրավունքները հետագա վարույթներում: Վեճի կողմերը անցկացվող խորհրդակցությունների ընթացքում փոխանակված գաղտնի կամ ծառայողական տեղեկությունները դիտարկում են նույն կերպ, ինչ տեղեկությունը տրամադրող կողմը:

8. Սույն հոդվածի համաձայն՝ խորհրդակցությունների ժամանակ վեճի յուրաքանչյուր կողմ ապահովում է իր իրավասու պետական մարմինների կամ այլ կարգավորող մարմինների անձնակազմի մասնակցությունը, որոնք ունեն համապատասխան գիտելիքներ/փորձ այն հարցերի վերաբերյալ, որոնց շուրջ անցկացվում են խորհրդակցությունները:

9. Խորհրդակցություններն անցկացվում են այն կողմի տարածքում, որի դեմ ներկայացվել է բողոքը, եթե վեճի կողմերի միջև այլ համաձայնություն չկա: Վեճի կողմերի համաձայնությամբ խորհրդակցությունները կարող են անցկացվել հասանելի ցանկացած տեխնոլոգիական միջոցներով:

Հոդված 6

Բարի ծառայություններ, հաշտարարություն կամ միջնորդություն

1. Կողմերը կարող են վեճերի կարգավորման ընթացակարգի ցանկացած փուլում սույն հավելվածին համապատասխան դիմել բարի ծառայությունների, հաշտարարության կամ միջնորդության: Բարի ծառայությունները, հաշտարարությունը կամ միջնորդությունը կարող են մեկնարկվել եւ դադարեցվել կամ ավարտվել ցանկացած պահի՝ որեւէ Կողմի կողմից:

2. Բարի ծառայությունների, հաշտեցման եւ միջնորդության ներգրավմամբ քննությունները, մասնավորապես՝ այդ քննությունների ընթացքում վեճի կողմերի զբաղեցրած դիրքորոշումները պետք է լինեն գաղտնի եւ չպետք է սահմանափակվեն վեճի կողմերից որեւէ մեկի իրավունքները հետագա որեւէ վարույթում:

Հոդված 7

Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին հարցումը

1. Բողոք ներկայացնող կողմը, որը սույն հավելվածի 5-րդ հոդվածի համաձայն ներկայացրել է խորհրդակցություններ անցկացնելու հարցում կամ սույն հավելվածի 6-րդ հոդվածի համաձայն՝ բարի ծառայությունների, հաշտարարության կամ միջնորդության հարցում, կարող է ներկայացնել Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին գրավոր հարցում, եթե՝

ա) կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, չի պահպանում սույն հավելվածի 5-

որ հոդվածի 3-րդ կամ 4-րդ կետերին համապատասխան սահմանված ժամկետները.

բ) վեճի կողմերը համատեղ համարում են, որ սույն հավելվածի 5-րդ հոդվածով սահմանված խորհրդակցությունների արդյունքում վեճը չի լուծվել 75 (յոթանասունհինգ) օրվա ընթացքում կամ հրատապ դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների դեպքում՝ սույն հավելվածի 5-րդ հոդվածի 3-րդ կետում նշված խորհրդակցություններ անցկացնելու հարցումը ներկայացնելու օրվանից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում. կամ

գ) կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, չի կատարել սույն հավելվածի 5-րդ հոդվածով սահմանված խորհրդակցությունների ընթացքում մշակված փոխհամաձայնեցված լուծման պահանջները:

2. Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին հարցումը սույն համաձայնագրի 27-րդ հոդվածին (Համակարգողները) համապատասխան նշանակված համակարգողի միջոցով գրավոր ներկայացվում է կողմին, որի դեմ ներկայացվել է բողոքը, եւ Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ հարցումը ներկայացնելու մասին: Բողոք ներկայացնող կողմն իր հարցման մեջ նշում է քննության առարկա հանդիսացող հատուկ միջոցը եւ բացատրում, թե ինչպես այդ միջոցը չի համապատասխանում սահմանված դրույթներին այնպես, որ այն բավարար լինի բողոքի փաստական եւ իրավական հիմքը հստակ ներկայացնելու համար: Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, անհապաղ հաստատում է հարցման ստացումը՝ բողոք ներկայացնող կողմին ուղարկելով ծանուցում, որտեղ նշվում է հարցումն ստանալու ամսաթիվը, եւ Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդպիսի հարցում ստանալու մասին:

3. Եթե Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին հարցումն ստանալու օրվանից հետո 20 (քսան) օրվա ընթացքում վեճի կողմերն այլ համաձայնության չեն գալիս, ապա Արբիտրաժային կոլեգիայի առաջադրանքը ներառում է՝

Եվրասիական տնտեսական միության եւ նրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջեւ ժամանակավոր առետրային համաձայնագրի համապատասխան դրույթների լույսի ներքո դիտարկել սույն համաձայնագրի 4-րդ հավելվածի 7-րդ հոդվածին համապատասխան Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին հարցման մեջ նշված հարցը, կայացնել որոշում քննարկվող

միջոցի՝ սույն համաձայնագրի 4-րդ հավելվածի 3-րդ հոդվածում նշված դրույթներին համապատասխանության մասին եւ սահմանել փաստերը, համապատասխան դրույթների կիրառելիությունը եւ ցանկացած եզրակացության եւ առաջարկության հիմնական հիմնավորումը եւ ներկայացնել հաշվետվություն՝ սույն համաձայնագրի 4-րդ հավելվածի 12-րդ հոդվածին համապատասխան:

Եթե վեճի կողմերը համաձայնեցնում են Արբիտրաժային կոլեգիայի առաջադրանքի այլ պայմաններ, ապա նրանք սույն կետում նշված ժամկետներում Արբիտրաժային կոլեգիային ներկայացնում են առաջադրանքի համաձայնեցված պայմանները:

4. Հրատապ դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների դեպքում վեճի կողմերը գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի առավելագույնս արագացնեն Արբիտրաժային կոլեգիայի ստեղծումը:

Հոդված 8

Արբիտրաժային կոլեգիայի կազմը եւ ստեղծումը

1. Արբիտրաժային կոլեգիան կազմված է երեք (3) արբիտրից:

2. Վեճի կողմերն արբիտր նշանակում են Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու մասին այն կողմի հարցումն ստանալուց հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում, որի դեմ ներկայացվել է բողոքը:

Բոլոր արբիտրները պետք է՝

ա) ունենան բավարար գիտելիքներ եւ (կամ) փորձ իրավագիտության, միջազգային առևտրի, սույն համաձայնագրի շրջանակներում գտնվող այլ հարցերի կամ միջազգային առևտրային համաձայնագրերի շրջանակներում վեճերի կարգավորման ոլորտում.

բ) ընտրվեն բացառապես օբյեկտիվության, անկողմնակալության, հուսալիության եւ ողջամիտ դատողություններ կատարելու սկզբունքների հիման վրա.

գ) լինեն վեճի կողմերից անկախ եւ չլինեն փոխկապակցված վեճի որեւէ կողմի

հետ կամ չստանան ցուցումներ վեճի որեւէ կողմից.

դ) հանդես գան իրենց անունից եւ չստանան ցուցումներ որեւէ կազմակերպությունից կամ կառավարությունից կամ չլինեն փոխկապակցված վեճի կողմերից որեւէ մեկի կառավարության հետ.

ե) վեճի կողմերի համար բացահայտեն ցանկացած տեղեկություն, որը կարող է հիմնավոր կասկածներ առաջացնել նրանց անկախության կամ անկողմնակալության վերաբերյալ, մասնավորապես՝ քննարկվող հարցի առնչությամբ շահերի ուղղակի կամ անուղղակի բախման մասով.

զ) լինեն ինչպես Մոնդոլիայի, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հետ դիվանագիտական հարաբերություններ ունեցող պետությունների քաղաքացիներ. եւ

է) նախկինում որեւէ կարգավիճակով առնչված չլինեն տվյալ վեճին, այդ թվում՝ սույն հավելվածի 6-րդ հոդվածին համապատասխան:

3. Երկրորդ արբիտրին նշանակելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում նշանակված արբիտրները փոխհամաձայնությամբ ընտրում են Արբիտրաժային կոլեգիայի նախագահող, որի վրա չպետք է տարածվի բացարկի հետեւյալ չափանիշներից ոչ մեկը.

ա) Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Մոնդոլիայի քաղաքացի լինելը. կամ

բ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Մոնդոլիայի տարածքում մշտական բնակության վայր ունենալը:

4. Եթե անհրաժեշտ նշանակումները չեն կատարվում սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված ժամկետներում, ապա վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է հրավիրել Արդարադատության միջազգային դատարանի (այսուհետ՝ ԱՄԴ) նախագահին՝ հանդես գալու որպես նշանակող մարմին, եթե վեճի կողմերի կողմից այլ բան համաձայնեցված չէ: Եթե ԱՄԴ-ի նախագահը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Մոնդոլիայի քաղաքացի է կամ չի կարող իրականացնել նշանակման այդ գործառույթը, ապա համապատասխան

նշանակումները կատարելու նպատակով անհրաժեշտ է դիմել ԱՄԴ-ի նախագահի տեղակալին կամ ըստ պաշտոնի ավագության հաջորդ պաշտոնյային, որը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության կամ Մոնղոլիայի քաղաքացի չէ եւ կարող է իրականացնել նշանակման այդ գործառույթը:

5. Եթե սույն հոդվածի համաձայն վեճերի լուծման ընթացակարգում նշանակված արբիտրը հրաժարական է տալիս կամ չի կարողանում իրականացնել իր լիազորությունները, ապա հաջորդ արբիտրը նշանակվում է 15 (տասնհինգ) օրվա ընթացքում՝ սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված ընթացակարգին համապատասխան, եւ հաջորդին վերապահվում են սկզբնական նշանակված արբիտրի բոլոր լիազորություններն ու պարտականությունները: Վարույթի ընթացքում կիրառելի ցանկացած ժամկետ կասեցվում է՝ սկսած այն օրվանից, երբ արբիտրը հրաժարական է տալիս կամ այլեւս ունակ չէ իրականացնելու իր գործառույթները՝ մինչեւ այն օրը, երբ ընտրվում է նրան փոխարինող անձը:

6. Արբիտրաժային կոլեգիայի ստեղծման ամսաթիվ համարվում է այն ամսաթիվը, որի դրությամբ Արբիտրաժային կոլեգիայի նախագահողը ընդունել է նշանակումը:

Հոդված 9

Արբիտրաժային կոլեգիայի գործառույթները

1. Սույն հավելվածի 8-րդ հոդվածի համաձայն սահմանված Արբիտրաժային կոլեգիայի գործառույթները հետեւյալն են.

ա) տալ օբյեկտիվ գնահատական իրեն ներկայացված հարցին, այդ թվում՝ օբյեկտիվորեն ուսումնասիրել գործի փաստերը, վեճի կողմերի կողմից վկայակոչված՝ սույն համաձայնագրի դրույթների կիրառելիությունը, եւ թե արդյոք կողմը, որին ներկայացվել է բողոքը, չի կատարել սույն համաձայնագրով նախատեսված պարտավորությունները.

բ) իր որոշումներում եւ հաշվետվություններում ներկայացնել փաստերի վերաբերյալ եզրակացությունները, իր հայեցողությամբ իրեն փոխանցված վեճը լուծելու համար անհրաժեշտ ցանկացած եզրակացության եւ որոշման հիմնական

հիմնավորումը.

գ) պարբերաբար խորհրդակցել կողմերի հետ եւ համապատասխան հնարավորություններ ստեղծել փոխհամաձայնեցված լուծման հասնելու համար.

դ) իր վերջնական հաշվետվության մեջ վեճի կողմի խնդրանքով որոշել կիրարկման միջոցների համապատասխանությունը եւ (կամ) համապատասխան արտոնությունների կասեցումը:

2. Սույն հավելվածին համապատասխան հիմնադրված Արբիտրաժային կոլեգիան սույն համաձայնագրի դրույթները մեկնաբանում է միջազգային հանրային իրավունքում ճանաչված մեկնաբանման սովորութային կանոնների համաձայն: Արբիտրաժային կոլեգիայի զեկույցներով եւ վճիռներով չեն կարող ավելացվել կամ պակասեցվել սույն համաձայնագրում նշված դրույթներով սահմանված Կողմերի իրավունքները եւ պարտավորությունները:

Հոդված 10

Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքի ընթացակարգը

1. Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքն իրականացվում է սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Արբիտրաժային կոլեգիան կարգավորում է իր սեփական կանոնները եւ վեճի կողմերի արտահայտվելու իրավունքների հետ կապված ընթացակարգերը եւ իր քննարկումները՝ վեճի կողմերի հետ խորհրդակցելուց հետո: Վեճի կողմերի պահանջով կամ իր սեփական նախաձեռնությամբ Արբիտրաժային կոլեգիայի հետ խորհրդակցելուց հետո կարող է ընդունել սույն հոդվածի դրույթներին չհակասող լրացուցիչ կանոններ եւ ընթացակարգեր:

3. Վեճի կողմերի հետ խորհրդակցելուց հետո Արբիտրաժային կոլեգիան իր ստեղծման պահից հետո 10 (տասը) օրվա ընթացքում սահմանում է Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքի ժամանակացույցը: Հրատապ դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների դեպքում, որոնք արագ կորցնում են իրենց առևտրային արժեքը, Արբիտրաժային կոլեգիան եւ վեճի կողմերը գործադրում են բոլոր ջանքերը՝

աշխատանքի իրականացումն առավելագույնս արագացնելու նպատակով: Այդ ժամանակացույցը ներառում է վեճի կողմերի կողմից գրավոր նյութերը ներկայացնելու հստակ ժամկետներ: Վեճի կողմերի փոխհամաձայնությամբ Արբիտրաժային կոլեգիայի հետ խորհրդակցելուց հետո այդ ժամանակացույցը կարող է փոփոխվել:

4. Վեճի կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ Արբիտրաժային կոլեգիան կարող է իր հայեցողությամբ ցանկացած անձից կամ մարմնից, որին նպատակահարմար կհամարի, պահանջել տեղեկություններ եւ (կամ) տեխնիկական խորհրդատվություն: Մինչ Արբիտրաժային կոլեգիան պահանջում է այդպիսի տեղեկություններ եւ (կամ) խորհրդատվություն, նա տեղեկացնում է այդ մասին վեճի կողմերին: Այդ կերպ ձեռք բերված տեղեկությունները եւ (կամ) տեխնիկական խորհրդատվությունը ներկայացվում են վեճի կողմերին՝ նրանց դիտողություններն ստանալու նպատակով: Եթե Արբիտրաժային կոլեգիան իր զեկույցը նախապատրաստելիս հաշվի է առնում այդ տեղեկությունները եւ (կամ) տեխնիկական խորհուրդները, ապա այն պետք է հաշվի առնի նաեւ տեղեկությունների եւ (կամ) տեխնիկական խորհրդատվության շուրջ վեճի կողմերի ներկայացրած ցանկացած դիտողություն: Տեղեկությունները եւ (կամ) խորհրդատվությունը պարտավորեցնող չեն:

5. Արբիտրաժային կոլեգիան կայացնում է ընթացակարգային որոշումները, եզրահանգումներն ու որոշումները ընդհանուր համաձայնությամբ՝ պայմանով, որ եթե Արբիտրաժային կոլեգիան չկարողանա ձեռք բերել ընդհանուր համաձայնություն, ապա այդ ընթացակարգային որոշումները, եզրահանգումներն ու որոշումները կարող են կայացվել ձայների մեծամասնությամբ: Արբիտրաժային կոլեգիան իր զեկույցում նշում է արբիտրների տարբեր կարծիքները միաձայն չհամաձայնեցված հարցերի վերաբերյալ՝ առանց բացահայտելու, թե որ արբիտրներն են միացել մեծամասնության կամ փոքրամասնության կարծիքներին:

6. Արբիտրաժային կոլեգիայի լսումները փակ են հանրության համար, եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ:

7. Վարույթի ընթացքում վեճի կողմերին հնարավորություն է տրվում մասնակցելու ցանկացած շնորհանդեսի, հայտարարությունների կամ վիճարկման գործընթացին: Արբիտրաժային կոլեգիայի վեճի կողմի ներկայացրած ցանկացած

տեղեկություն կամ գրավոր հայտարարություն, այդ թվում՝ նախնական զեկույցի նկարագրական մասի վերաբերյալ ցանկացած դիտողություն եւ Արբիտրաժային կոլեգիայի կողմից բարձրացված հարցերի պատասխանները պետք է հասանելի լինեն վեճի մյուս կողմին:

8. Արբիտրաժային կոլեգիայի քննարկումները եւ դրան ներկայացված փաստաթղթերը գաղտնի են: Իր ներքին քննարկումների համար Արբիտրաժային կոլեգիան հանդիպում է փակ նիստում, որին մասնակցում են միայն արբիտրները: Արբիտրաժային կոլեգիան կարող է նաեւ թույլ տալ, որ իր օգնականները մասնակցեն իր քննարկումներին: Վեճի կողմերը կարող են ներկա գտնվել նիստին միայն Արբիտրաժային կոլեգիայի կողմից տրված՝ նիստին մասնակցելու հրավերով:

9. Սույն հավելվածում ոչինչ չի խոչընդոտում վեճի կողմին ներկայացնելու իր իսկ դիրքորոշումների մասին հայտարարությունները հանրությանը: Վեճի կողմը վեճի մյուս կողմի՝ Արբիտրաժային կոլեգիային ներկայացրած որպես գաղտնի նշված տեղեկությունները դիտարկում է որպես գաղտնի տեղեկություններ: Վեճի կողմը մյուս կողմի պահանջով ներկայացնում է իր գրավոր հայտարարությունների մեջ ներառված տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփ տարբերակը, որը կարելի է բացահայտել հանրության համար:

10. Լսումների վայրը որոշվում է վեճի կողմերի փոխհամաձայնությամբ: Եթե համաձայնություն ձեռք չի բերվում, ապա լսումներն անցկացվում են հաջորդաբար վեճերի կողմերի պետությունների մայրաքաղաքներում՝ առաջին լսումն անցկացնելով այն կողմի պետության մայրաքաղաքում, որին ներկայացվել է բողոքը: Եթե Եվրասիական տնտեսական միությունը սույն հավելվածի դրույթներին համապատասխան հանդես է գալիս որպես վեճի կողմ, ապա համապատասխան այլընտրանքային լսումներն անցկացվում են Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում:

Հոդված 11

Վարույթի կասեցումը եւ դադարեցումը

1. Արբիտրաժային կոլեգիան վեճի կողմերի համատեղ պահանջով ցանկացած

Ժամանակ այդպիսի համատեղ պահանջն ստանալու օրվան հաջորդող 12 (տասներկու) հաջորդական ամիսը չգերազանցող ժամկետով կասեցնում է իր աշխատանքը: Այդ դեպքում վեճի կողմերը համատեղ գրավոր ծանուցում են այդ մասին Արբիտրաժային կոլեգիայի նախագահողին, եւ համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ ծանուցման մասին: Այդ ժամկետում վեճի ցանկացած կողմ կարող է լիազորել Արբիտրաժային կոլեգիային վերականգնելու իր աշխատանքը՝ դրա մասին գրավոր ծանուցելով Արբիտրաժային կոլեգիայի նախագահողին եւ վեճի մյուս կողմին: Եթե Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը կասեցվել է ավելի քան 12 (տասներկու) հաջորդական ամսով, Արբիտրաժային կոլեգիա ստեղծելու լիազորությունը դադարում է (եւ վեճերի կարգավորման ընթացակարգը դադարեցվում է), եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ: Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը կասեցնելու դեպքում սույն հավելվածում նշված համապատասխան ժամկետները երկարացվում են այն ժամկետով, որով կասեցվել էր Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը:

2. Արբիտրաժային կոլեգիայի աշխատանքը դադարում է վեճի կողմերի համատեղ պահանջով Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցից առաջ՝ ցանկացած պահի: Այդ դեպքում վեճի կողմերը համատեղ գրավոր ծանուցում են այդ մասին Արբիտրաժային կոլեգիայի նախագահողին, եւ Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ ծանուցման մասին:

Հոդված 12

Արբիտրաժային կոլեգիայի զեկույցները

1. Վեճի կողմերը չեն մասնակցում Արբիտրաժային կոլեգիայի զեկույցների մշակման գործընթացին, որը պետք է հիմնված լինի սույն համաձայնագրի համապատասխան դրույթների, վեճի կողմերի հայտարարությունների ու փաստարկների եւ սույն հավելվածի 10-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան տրամադրված ցանկացած տեղեկության եւ (կամ) խորհրդատվության վրա:

2. Արբիտրաժային կոլեգիան նախնական զեկույցը ներկայացնում է

Արբիտրաժային կոլեգիան ստեղծվելու պահից 90 (իննսուն) օրվա ընթացքում կամ հրատապ դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների դեպքում՝ 60 (վաթսուն) օրվա ընթացքում: Նախնական զեկույցում, ի թիվս այլնի, ներկայացվում են ինչպես նկարագրական բաժիններ, այնպես էլ Արբիտրաժային կոլեգիայի բացահայտած փաստերը, համապատասխան դրույթների կիրառելիությունը եւ Արբիտրաժային կոլեգիայի կողմից արվող բոլոր եզրահանգումների եւ եզրակացությունների հիմնական հիմնավորումները:

3. Բացառիկ հանգամանքներում, երբ Արբիտրաժային կոլեգիան համարում է, որ այն չի կարող ներկայացնել նախնական զեկույցը սույն հոդվածի 2-րդ կետում սահմանված ժամկետներում, Արբիտրաժային կոլեգիայի նախագահողը վեճի կողմերին գրավոր ծանուցում է նախնական զեկույցի ներկայացումը ձգձգելու պատճառների մասին՝ միաժամանակ նշելով ենթադրվող ժամկետների մասին, որի ընթացքում կներկայացվի նախնական զեկույցը, եւ Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ ծանուցման մասին: Ցանկացած ձգձգում չպետք է գերազանցի 30 (երեսուն) օրը, եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ:

4. Վեճի կողմը կարող է Արբիտրաժային կոլեգիայի նախնական զեկույցն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում ներկայացնել նախնական զեկույցի վերաբերյալ գրավոր դիտողություններ, եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ: Այդ դիտողությունների վերաբերյալ վեճի մյուս կողմը կարող է ներկայացնել դիտողություններ, որոնք ներկայացվում են այն ստանալուց հետո 6 (վեց) ամսվա ընթացքում: Եթե վեճի կողմերից չեն ստացվում դիտողություններ այդ դիտողությունները ներկայացնելու համար նախատեսված ժամկետում, ապա միջանկյալ զեկույցը համարվում է վերջնական զեկույց:

5. Քննարկելով նախնական զեկույցի վերաբերյալ վեճի կողմերի ներկայացրած ցանկացած գրավոր դիտողություն եւ կատարելով լրացուցիչ ուսումնասիրություն՝ Արբիտրաժային կոլեգիան վեճի վերաբերյալ վճիռը եւ նախնական որոշումը պարունակող վերջնական զեկույցը վեճի կողմերին է ներկայացնում նախնական զեկույցը ներկայացնելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ: Հրատապ դեպքերում, այդ թվում՝

շուտ փչացող ապրանքների դեպքում Արբիտրաժային կոլեգիան գործադրում է բոլոր ջանքերը, որպեսզի նախնական զեկույցը ներկայացնելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում ներկայացնի վերջնական զեկույցը, եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ:

6. Եթե Արբիտրաժային կոլեգիան համարում է, որ այս վերջնաժամկետը հնարավոր չէ պահպանել, ապա Արբիտրաժային կոլեգիայի նախագահողը վեճի կողմերին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները եւ այն օրը, երբ Արբիտրաժային կոլեգիան պլանավորում է ներկայացնել իր վերջնական զեկույցը: Արբիտրաժային կոլեգիան ոչ մի դեպքում նախնական զեկույցը չի ներկայացնում Արբիտրաժային կոլեգիան ստեղծելու օրվանից 150 (հարյուր հիսուն), իսկ հրատապ դեպքերում, այդ թվում՝ շուտ փչացող ապրանքների դեպքում՝ 80 (ութսուն) օրվա ընթացքում:

7. Եթե Արբիտրաժային կոլեգիան իր վերջնական զեկույցում համարում է, որ այն կողմի ձեռնարկած միջոցը, որի դեմ ներկայացվել է բողոքը, հակասում է սույն համաձայնագրին, ապա այն իր եզրակացություններում եւ վճռում ներառում է անհամապատասխանությունը վերացնելու պահանջ:

8. Վեճի կողմերը հրապարակում են Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցն այն տրամադրվելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում, գաղտնի տեղեկությունները պահպանելու պայմանով, եթե վեճի կողմերից որեւէ մեկը չի առարկում: Այդ դեպքում վերջնական զեկույցը, այնուամենայնիվ, տրամադրվում է Համաձայնագրի բոլոր կողմերին՝ վեճի կողմերին զեկույցը ներկայացնելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում:

9. Կողմերն անվերապահորեն ընդունում են Արբիտրաժային կոլեգիայի որոշումները եւ զեկույցները: Դրանք չեն առաջացնում որեւէ իրավունք կամ պարտավորություն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար: Արբիտրաժային կոլեգիայի վճիռը ենթակա չէ բողոքարկման:

Հոդված 13

Պարզաբանելու հարցում

1. Վերջնական զեկույցն ստանալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում վեճի կողմը կարող է գրավոր հարցում ուղարկել Արբիտրաժային կոլեգիային՝ պարզաբանելու վերջնական զեկույցի ցանկացած սահմանում կամ առաջարկություն, որը վեճի կողմը գտնում է ոչ միանշանակ: Արբիտրաժային կոլեգիան հարցմանը պատասխանում է այդ հարցումն ստանալու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հարցում ներկայացնելը չի ազդում սույն հավելվածի 14-րդ հոդվածում եւ 17-րդ հոդվածում նշված ժամկետների վրա, եթե Արբիտրաժային կոլեգիան այլ բան չի որոշում:

Հոդված 14

Վճռի կատարումը

1. Վեճի կողմերը ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Արբիտրաժային կոլեգիայի վճիռն առանց անհարկի ձգձգումների կատարելու համար:

2. Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցն ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում այն կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, բողոք ներկայացնող կողմին ծանուցում է՝

ա) այն միջոցների մասին, որոնք նա մտադիր է ձեռնարկել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված պարտավորությունը կատարելու համար. եւ

բ) Արբիտրաժային կոլեգիայի վերջնական վճռի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածի մասին:

Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ ծանուցման մասին:

Հոդված 15

Ողջամիտ ժամկետները

1. Եթե Արբիտրաժային կոլեգիայի վճռի անհապաղ կատարումն անհնար է,

վեճի կողմերը փորձում են ձեռք բերել փոխհամաձայնություն՝ Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցի կատարման համար ողջամիտ ժամկետների տեւողության վերաբերյալ:

2. Եթե վեճի կողմերի միջեւ սույն հավելվածի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան առաջարկվող ժամկետում կատարելու մասով առկա է տարաձայնություն, վեճի կողմերից մեկը կարող է սկզբնական Արբիտրաժային կոլեգիային ներկայացնել գրավոր հարցում՝ վճիռը կատարելու համար սահմանված ժամկետի տեւողությունը որոշելու համար: Այդ հարցումը միաժամանակ ներկայացվում է նաեւ վեճի մյուս կողմին, եւ համատեղ կոմիտեին տեղեկացվում է այդ հարցման մասին: Արբիտրաժային կոլեգիան ողջամիտ ժամկետները սահմանելու եւ այդ սահմանման պատճառների մասին իր որոշումը վեճի կողմերին ներկայացնում է հարցումն ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

3. Երբ Արբիտրաժային կոլեգիան համարում է, որ չի կարող ողջամիտ ժամկետներ սահմանել սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամանակահատվածում, նա զեկույցի ներկայացումը ձգձգելու պատճառների, ինչպես նաեւ այն ներկայացնելու ենթադրվող ժամկետների մասին գրավոր տեղեկացնում է վեճի կողմերին: Ցանկացած ձգձգում չպետք է գերազանցի 30 (երեսուն) օրը, եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ:

4. Վեճի կողմերը կարող են ցանկացած ժամանակ շարունակել գտնել Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցի իրականացման շուրջ փոխադարձաբար ընդունելի լուծում:

5. Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, բողոք ներկայացնող կողմին գրավոր տեղեկացնում է այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են սույն համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները չկատարելուն վերջ դնելու եւ Արբիտրաժային կոլեգիայի վճիռը կատարելու ուղղությամբ՝ ողջամիտ ժամկետը լրանալուց առնվազն 30 (երեսուն) օր առաջ: Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ ծանուցման մասին:

6. Վեճի կողմերը կարող են համաձայնության գալ ողջամիտ ժամկետի երկարաձգման շուրջ:

Հոդված 16

Համապատասխանության ստուգում

1. Անմիջապես կամ սույն հավելվածի 15-րդ հոդվածի համաձայն սահմանված ողջամիտ ժամկետներում Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցի պահանջների կատարումն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցների համապատասխանության վերաբերյալ Կողմերի միջև տարաձայնության դեպքում բոլոր ներկայացնող կողմը սկզբնական Արբիտրաժային կոլեգիա կարող է ներկայացնել հարցի վերաբերյալ վճիռ կայացնելու գրավոր պահանջ:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան Արբիտրաժային կոլեգիային ուղղված հարցումը կարող է ներկայացվել միայն հետեւյալներից որեւէ մեկն ամենավաղը տեղի ունենալուց հետո.

ա) սույն հավելվածի 15-րդ հոդվածին համապատասխան սահմանված ողջամիտ ժամկետի ավարտ. կամ

բ) բոլոր ստացած Կողմի կողմից բոլոր ներկայացնող Կողմին ուղարկված ծանուցում առ այն, որ կատարվել է սույն հավելվածի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտավորությունը, ներառյալ՝ բոլոր ստացած Կողմի կողմից այդ պարտավորությունը կատարելու համար ձեռնարկված միջոցների նկարագրությունը:

Հարցման մեջ նշվում է վիճելի միջոցը եւ բացատրվում, թե ինչպես է այդ միջոցը հակասում սահմանված դրույթներին, այնպես որ հստակ ներկայացվի տվյալ բոլորքը բերելու իրավական հիմքը:

3. Արբիտրաժային կոլեգիան իրականացնում է իրեն ներկայացված վեճի օբյեկտիվ գնահատում, այդ թվում օբյեկտիվ գնահատում է հետեւյալը.

ա) կիրարկման գործողությունների փաստական կողմերը, որոնք ձեռնարկել է կողմը, որի դեմ ներկայացվել է բոլորքը. եւ

բ) արդյոք կողմը, որի դեմ ներկայացվել է բոլորքը, կատարել է սույն հավելվածի 14-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պարտավորությունը:

4. Արբիտրաժային կոլեգիան սույն հոդվածի 1-ին կետով սահմանված

հարցումն ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում իր որոշումը ներկայացնում է վեճի կողմերին: Զեկույցը պարունակում է Արբիտրաժային կոլեգիայի որոշումը եւ այդ որոշման հիմնավորումը:

5. Եթե Արբիտրաժային կոլեգիան համարում է, որ չի կարող ներկայացնել իր զեկույցը սույն հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետում, ապա նա իր զեկույցի ներկայացումն ուշացնելու պատճառների, ինչպես նաեւ այն ներկայացնելու ենթադրվող ժամկետների մասին գրավոր տեղեկացնում է վեճի կողմերին: Ցանկացած ուշացում չպետք է գերազանցի 30 (երեսուն) օրը, եթե այլ բան նախատեսված չէ վեճի կողմերի համաձայնությամբ:

6. Սկզբնական Արբիտրաժային կոլեգիայի արբիտրներից որեւէ մեկի անհասանելիության դեպքում կիրառվում են սույն հավելվածի 8-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերը:

Հոդված 17

Ժամանակավոր միջոցները անհամապատասխանության դեպքում

1. Եթե կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, անմիջապես կամ սույն հավելվածի 15-րդ հոդվածի համաձայն սահմանված ողջամիտ ժամկետներում չի կատարում Արբիտրաժային կոլեգիայի վճիռը, կամ եթե՝

ա) սույն հավելվածի 14-րդ հոդվածում նշված ժամկետում կամ նախքան ողջամիտ ժամկետի ավարտը չի ծանուցում վճիռը կատարելու համար ձեռնարկված ցանկացած միջոցի մասին,

բ) բողոք ներկայացնող կողմին ծանուցում է այն մասին, որ մտադիր չէ կատարել Արբիտրաժային կոլեգիայի վճիռը, եւ (կամ)

գ) սկզբնական Արբիտրաժային կոլեգիան որոշում է, որ կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, սույն հավելվածի 14-րդ հոդվածին համապատասխան չի կատարել Արբիտրաժային կոլեգիայի վճիռը,

ապա կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, բողոք ներկայացնող կողմի պահանջով խորհրդակցություն է անցկացնում՝ փոխադարձաբար ընդունելի

Ժամանակավոր հատուցման մասին համաձայնության գալու նպատակով: Եթե այդպիսի համաձայնություն ձեռք չի բերվում հարցումն ստանալուց հետո 20 (քսան) օրվա ընթացքում, ապա բոլոր ներկայացնող կողմը, գրավոր ծանուցելով կողմին, որի դեմ ներկայացվում է բողոքը, իրավունք ունի կասեցնելու սույն համաձայնագրի շրջանակներում այն կողմի առնչությամբ տրամադրված արտոնությունների կիրառումը, որի դեմ ներկայացվել է բողոքը, սակայն այն արտոնություններին համարժեք չափով, որոնց վրա ազդեցություն է ունեցել Արբիտրաժային կոլեգիայի կողմից սույն համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցը: Նման ծանուցումը կատարվում է կասեցումն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ: Համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդ ծանուցման մասին:

2. Քննարկելիս այն հարցը, թե որ արտոնությունները պետք է կասեցնել, վեճի Կողմն առաջին հերթին ձգտում է կասեցնել արտոնություններն այն նույն ոլորտում կամ ոլորտներում, որոնց վրա ազդեցություն են ունեցել այն միջոցները, որոնք Արբիտրաժային կոլեգիան ճանաչել է սույն համաձայնագրին ոչ համապատասխան: Եթե բոլոր ներկայացնող կողմը անիրագործելի կամ աննպատակահարմար է համարում նույն հատվածում կամ հատվածներում սույն համաձայնագրում սահմանված արտոնությունների կամ այլ պարտավորությունների կասեցումը, այն կարող է կասեցնել այլ հատվածներում արտոնությունները կամ այլ պարտավորություններ:

3. Կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, այդ ծանուցումն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում կարող է պահանջել սկզբնական Արբիտրաժային կոլեգիայից որոշում կայացնել այն հարցի շուրջ, թե արդյոք սույն համաձայնագրով շնորհված այն արտոնությունները կամ այլ պարտավորություններ, որոնք բողոք ներկայացնող կողմը մտադիր է կասեցնել, իրականացվում են այն արտոնություններին համարժեք չափով, որոնց վրա ազդեցություն է ունեցել Արբիտրաժային կոլեգիայի կողմից սույն համաձայնագրին չհամապատասխանող ճանաչված միջոցը, եւ թե արդյոք ենթադրվող կասեցումն իրականացվում է սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան: Արբիտրաժային կոլեգիայի վճիռն ընդունվում է նշված հարցումն ստանալու պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում եւ անվերապահորեն ընդունվում է Կողմերի կողմից: Արտոնությունները չեն կասեցվում մինչեւ Արբիտրաժային կոլեգիայի վճիռը կայացնելը:

4. Սույն համաձայնագրով սահմանված արտոնությունների կամ այլ պարտավորությունների կասեցումը ժամանակավոր է, եւ բողոք ներկայացնող կողմի կողմից կիրառվում է միայն մինչեւ՝

ա) Արբիտրաժային կոլեգիայի վերջնական զեկույցի պահանջների կատարումն ապահովելու նպատակով ձեռնարկված այն միջոցը, որը ճանաչվել է սույն համաձայնագրում ընդգրկված դրույթներին չհամապատասխանող, վերացվել կամ փոփոխվել է այնպես, որ ապահովվի այն կողմի համապատասխանությունն այդ դրույթներին, որի դեմ ներկայացվել է բողոքը.

բ) Արբիտրաժային կոլեգիան որոշում ընդունի այն մասին, որ համապատասխանության ապահովման միջոցը համատեղելի է արբիտրաժային որոշման եւ սույն համաձայնագրի դրույթների հետ. կամ

գ) Կողմերն այլ կերպ կարգավորեն վեճը կամ գտնեն փոխհամաձայնեցված լուծում:

5. Վեճի կողմի հարցման հիման վրա՝ սկզբնական Արբիտրաժային կոլեգիան վճիռ է կայացնում սույն համաձայնագրով սահմանված արտոնությունների կամ այլ պարտավորությունների կասեցումից հետո ընդունված ցանկացած կիրարկման միջոցի՝ իր վերջնական զեկույցին համապատասխանության մասին եւ այդ վճռի լույսի ներքո՝ այն մասին, թե արդյոք այդ արտոնությունների կասեցումը պետք է դադարեցվի կամ փոփոխվի: Արբիտրաժային կոլեգիայի վճիռները կայացվում են այդպիսի հարցում ստանալու օրվանից 30 (երեսուն) օրվա ընթացքում:

Հոդված 18

Ընդհանուր դրույթները

Սույն հավելվածին համապատասխան կատարվող բոլոր ծանուցումները, հարցումները եւ պատասխանները կազմվում են գրավոր:

Հոդված 19

Փոխհամաձայնեցված լուծումը

1. Վեճի կողմերը կարող են ցանկացած պահի հանգել փոխհամաձայնեցված լուծման՝ սույն հավելվածի 3-րդ հոդվածում նշված ցանկացած վեճի կապակցությամբ:

2. Եթե փոխհամաձայնեցված լուծումը ձեռք է բերվում Արբիտրաժային կոլեգիայի միջոցով կամ հաշտարարության ընթացակարգի ընթացքում, ապա վեճի կողմերը համատեղ ծանուցում են Արբիտրաժային կոլեգիայի նախագահողին կամ համապատասխանաբար միջնորդին, եւ համատեղ կոմիտեն տեղեկացվում է այդպիսի ծանուցման մասին: Նման ծանուցմամբ դադարում են Արբիտրաժային կոլեգիայի կամ հաշտարարության ընթացակարգերը:

3. Կողմերից յուրաքանչյուրը ձեռնարկում է համաձայնեցված ժամկետում փոխհամաձայնեցված լուծումն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ:

4. Իրագործող կողմը ոչ ուշ, քան համաձայնեցված ժամկետի ավարտը մյուս Կողմին գրավոր տեղեկացնում է փոխհամաձայնեցված լուծման իրականացման համար ձեռնարկված բոլոր միջոցների մասին:

Հոդված 20

Ժամկետները

Սույն հավելվածով սահմանված բոլոր ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով՝ սկսած (հայտարարությունը, ծանուցումը, հաղորդագրությունը կամ առաջարկությունը ստանալու օրվանից) ակտին կամ փաստին հաջորդող օրվանից, որին վերաբերում են դրանք, եթե այլ բան սահմանված չէ: Եթե այդպիսի ժամկետի վերջին օրը ստացող կողմի երկրում պետական տոն կամ ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետը երկարաձգվում է մինչեւ հաջորդ առաջին աշխատանքային օրը: Ընթացիկ ժամանակահատվածում պետական տոները կամ ոչ աշխատանքային օրերը ներառվում են ժամանակահատվածի հաշվարկում:

Սույն հավելվածում նշված ցանկացած ժամկետ կարող է փոփոխվել վեճի կողմերի փոխհամաձայնությամբ:

Արբիտրաժային կոլեգիան ցանկացած ժամանակ կարող է վեճի կողմերին առաջարկել փոփոխել սույն հավելվածում նշված ցանկացած ժամկետ՝ նշելով

առաջարկի պատճառները:

Հոդված 21

Վարձատրությունը եւ ծախսերը

1. Եթե վեճի կողմերն այլ բան չեն համաձայնեցնում, ապա՝

ա) վեճի յուրաքանչյուր կողմ իր նշանակած արբիտրի ծախսերը, իր ծախսերը եւ Արբիտրաժային կոլեգիայում մասնակցությունից կամ միջնորդության ընթացակարգից բխող դատական ծախսերն ինքն է կրում. եւ

բ) Արբիտրաժային կոլեգիայի նախագահողի, միջնորդի եւ Արբիտրաժային կոլեգիայի վարույթի իրականացման մյուս ծախսերը վեճի կողմերը կրում են հավասար չափով:

2. Վեճի ցանկացած կողմի հարցման հիման վրա՝ Արբիտրաժային կոլեգիան կարող է որոշում կայացնել սույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետում նշված ծախսերի վերաբերյալ՝ հաշվի առնելով գործի հատուկ հանգամանքները:

Հոդված 22

Լեզուն

1. Սույն հավելվածի համաձայն՝ բոլոր վարույթներն իրականացվում են անգլերեն:

2. Սույն հավելվածի համաձայն վարույթում օգտագործվելու համար ներկայացված ցանկացած փաստաթուղթ պետք է լինի անգլերեն: Եթե որեւէ փաստաթղթի բնօրինակ անգլերեն չէ, ապա վեճի կողմը, որն այն ներկայացնում է, տրամադրում է այդ փաստաթղթի անգլերեն թարգմանությունը:

Սույնով հավաստում եմ, որ տվյալ տեքստը Եվրասիական տնտեսական միության եւ դրա անդամ պետությունների՝ մի կողմից, եւ Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջեւ ժամանակավոր առետրային համաձայնագրի ամբողջական եւ նույնական պատճենն է, որը 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկ քաղաքում ստորագրել են՝

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Մ. Գ. Գրիգորյանը.

Բելառուսի Հանրապետության կողմից՝ Բելառուսի Հանրապետության վարչապետի տեղակալ Ն. Վ. Պետկեւիչը.

Ղազախստանի Հանրապետության կողմից՝ Ղազախստանի Հանրապետության վարչապետի տեղակալ Ս. Մ. Ժումանգարինը.

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝ Ղրղզստանի Հանրապետության նախարարների կաբինետի նախագահի առաջին տեղակալ Դ. Դ. Ամանգելդիեւը.

Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Ռուսաստանի Դաշնության կառավարության նախագահի տեղակալ Ա. Լ. Օվերչուկը.

Եվրասիական տնտեսական միության կողմից՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Բ. Ա. Սագինտաեւը.

Մոնղոլիայի կողմից՝ Մոնղոլիայի վարչապետի առաջին տեղակալ, Մոնղոլիայի էկոնոմիկայի եւ զարգացման նախարար, Մոնղոլիայի պետական մեծ խորալի անդամ Նյամ-Օսորին Ուչրալը:

Բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում:

Ընդամենը ժապավինված է,
ստորագրությամբ եւ կնիքով ամրագրված է
պատճենի 79 թերթ

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
իրավական դեպարտամենտի տնօրեն՝**

Լ. Վ. Շչուր-Տրուխանովիչ